

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՎԵՐՋԻՆ
ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ ՄԱՍԻՆ

ԼԻԲԱՆԱՆ ՅՈՒՇԱԳԻՐ ՄԸ ՅՂԵՑ ԲՈՖԻ ԱՆԱՆԻ

ՄԱԿԻ մէջ Լիբանանի դեսպան Սելիմ Թաաժուրի երէկ ՄԱԿԻ ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի փոխանցեց պաշտօնական յուշագիր մը, ուր ներկայացուց մանրամասնութիւնները իսրայէլեան օդուժի նախանցեալ օր Պեքաայի մէջ սուրիական դիրքին վրայ գործած յարձակումին: Ան խնդրեց այս յուշագիրին պատճենները իբրեւ պաշտօնական փաստաթուղթ փոխանցել Ապառնութեան Խորհուրդի անդամներուն:

Արտաքին գործոց նախարարութիւնը արտասահմանի մէջ Լիբանանի դիւանագիտական ներկայացուցչութիւններուն փոխանցեց իսրայէլեան օդուժի կիրակի օր Պեքաայի վրայ գործած յարձակումին մանրամասնութիւնները, պահանջելով, որ այս հարցը ներկայացնեն օտար պետութիւններու իշխանութիւններուն:

Իրանի արտաքին գործոց նախարար Քամալ իւրագի երէկ հեռաձայնեց իրանացի եւ սուրիացի իր պաշտօնակիցներ Մահմուտ Համմուտի եւ Ֆարուք Շարէհի:

Շար.ը՝ էջ 2

ԴԱՄԱՍԿՈՍ ԽԻՍՏՈՐՈՎ ՔՆՆԱԴԱՏԵՑ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ՈԱՏԱՐԻ ՍՈՒՐԻԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻՆ ՎՐԱՅ

ԴԱՄԱՍԿՈՍ, 2 (ՌՈՅԹԸՐԶ).- Սուրիա Երկուշաբթի օր խիստ ոճով դատապարտեց իսրայէլեան յարձակումները Լիբանանի մէջ սուրիական զինուորական կեդրոնի մը վրայ:

«Թըշրին» պաշտօնաթերթին մէջ լոյս տեսած խմբագրական յօդուածով մը խալաֆ Ժարատ կը գրէր, որ Սուրիոյ լաճնառութիւնը՝ Ժարատ եւ ամբողջական խաղաղութեան մը, չի ջնջեր յարձակումներուն հակադարձելու իր իրաւունքը: Ժարատ աւելցուց, որ պատերազմի ոճի գործը Արիւ Շարուն ներքին տագնապներէն փախուտ տալու համար թափ կու տայ շրջանային յարուածութեան, կեղծ պատրուակներով յարձակումներ գործելով Սուրիոյ եւ Լիբանանի դէմ: Ժարատ դիտել տուաւ նաեւ, որ մարդասպան Շարուն պատախաճատու է՝ շրջապատը տուր տագնապի մը մէջ մխրձելու: «Շարուն պէտք է գիտակցի, թէ Սուրիոյ, Լիբանանի եւ արաբներուն յանձնառութիւնը՝ խաղաղութեան, չի նշանակեր, որ անոնք չեն կրնար օրինակաւ ու կարելի բոլոր միջոցներով հակադարձել որեւէ ձեւի յարձակումի», աւելցուց Ժարատ:

«Պաաս» պաշտօնաթերթը, իր կարգին, խիստ ոճով քննադատեց Միացեալ Նահանգներու պրակցութիւնը Իսրայէլի: «Պաաս» կոչ ուղղեց միջազգային ընտանիքին, որ ճնշում քանցնէ իրեկան պետութեան վրայ՝ ընդունելու համար խաղաղութիւնը: Օրաթերթը աւելցուց, որ ամերիկեան կեցուածքը կը քաջալերէ Իսրայէլը՝ շարունակելու համար յարձակողական եւ ծաւալապաշտական քաղաքականութիւնը:

ԻՐԱՆ ԶՈՐԱԿԻԳ ԿԸ ԿԱՆԳՆԻ ՍՈՒՐԻՈՅ

Իրան յայտարարեց, որ կը դատապարտէ շաբաթվերջին տեղի ունեցած իսրայէլեան յարձակումները Սուրիոյ դէմ, որուն պրակցութիւն կը յայտնէր, ըստ սուրիացի բանքեր մը:

Բանքերը աւելցուց, որ Իրանի արտաքին գործոց նախարար Քամալ խարապի հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցած է սուրիացի պաշտօնակիցին՝ Ֆարուք Շարէհի հետ, քննարկելու համար իսրայէլեան օդանաւային յարձակումը Լիբանանի մէջ սուրիական դիրքերու վրայ: Սուրիացի բանքերը ըսաւ, որ խարապի խիստ ոճով դատապարտած է յարձակումը, վերահաստատելով Թեհրանի պրակցութիւնը դաշնակից Դամասկոսի:

ՊԱՂԵՍՏԻՆԵՒԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԶԻՆԱԴՈՒԼԸ ԿԸ ԳՏՆՈՒԻ ԱՆԿՈՒՄԻ ՍԵՄԻՆ



Մասնագէտները կը քննեն պայթած ինքնաշարժից մնացորդները:

Ամերիկեան հովանաւորութիւն վայելող պաղեստինեւիսրայէլեան զինադուր երէկ հասաւ անկումի սեմին, երբ ականուած երկու ինքնաշարժներ պայթեցան Թէլ Աւիւի օդակայանին մօտ, Էհուտ քաղաքին մէջ: Միջին Արեւելքի խաղաղութեան համար ՄԱԿԻ յատուկ պատուիրակ Թերի Ռոտ Լարսըն ըսաւ, որ

կացութիւնը չափազանց վտանգաւոր է: Ան աւելցուց, որ անցնող քանի մը օրերուն դրսեւորուած իրաւիճակը ցոյց կու տայ, թէ զինադուր որքան դիւրաբէկ է: Լարսըն դիտել տուաւ, որ բոլոր նախատեսութիւնները խնդրաքննելու կու տան, թէ զինադուր շուտով պիտի վիյի: Ականուած ինքնաշարժներու պայթումը

պոկեր ու վիրաւորներ չպատճառեց, սակայն սարսափի մթնոլորտ մը տարածեց ամէնուրեք: Պայթումներէն քանի մը ժամ առաջ իսրայէլեան ուղղաթիռ մը արձակուած հրթիռներ սպաննած էին երկ պաղեստինցիներ Այալոդիանաւի Ժեհին քաղաքին մէջ: Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթ դատապարտեց Ժեհինի գործողութիւնը, դիտել տալով, որ անիկա բացալայտ բռնաբարում մըն է զինադուրին: Արաֆաթ աւելցուց, որ Ժեհինի գործողութիւնը տգեղ ոճի մըն է պաղեստինցի քաղաքացիներուն դէմ:

Պաղեստինի Ապառնութեան Ժողովրդային Ճակատը (Է.Ֆ. Փէ. Լ. Փէ.) իրապարակեց յայտարարութիւն մը ստանձնելու համար երկուան երկու պայթումներուն պատասխանատուութիւնը: Է.Ֆ. Փէ. Լ. Փէ. ի յայտարարութիւնը կը նշէր, որ պայթումները վիրաւոր գործողութիւններ են: Պայթումները հակադարձութիւն էին Ժեհինի մէջ կատարուած երեք սպանութիւններուն եւ այլ «սահաբեկչութիւններու», որոնք կը կատարուին Իսրայէլի կողմէ:

Ժեհինի մէջ սպաննուած պաղեստինցիներէն մէկը՝ Մոհամետ Պշարաթ, երկար ժամանակէ ի վեր կը հետապնդուէր Իսրայէլի կողմէ: Պա

Շար.ը՝ էջ 10

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ԸՆԿԵՐՎԱՐ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎԻՆ

29 - 30 Յունիս 2001ին, Լիզպոնի մէջ գումարուեցաւ Ընկերվար Միջազգայնականի Խորհուրդի նիստը, մասնակցութեամբ Ընկերվար Միջազգայնականի անդամ շուրջ 120 կուսակցութիւններու ներկայացուցիչներուն, որոնց կարգին աւելի քան 15 նախագահներ, վարչապետներ եւ արտաքին գործոց նախարարներ: Ժողովին մասնակցեցաւ Է. Յ. Դ. պատուիրակութիւնը, բաղկացած Ընկերվար Միջազգայնականի մէջ Է. Յ. Դ. ներկայացուցիչ, Է. Յ. Դ. Բիւրոյի անդամ ընկեր Մարիօ Նալպանտեանէ, Բիւրոյի անդամ ընկեր Վահան Յովհաննէսեանէ, ինչպէս նաեւ՝ ընկերուհի Շաղիկ Մարուխեանէ:

Շար.ը՝ էջ 10

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ԸՆԿԵՐՎԱՐ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՒ ԱՐԵՒԷԼԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԺՈՂՈՎԻՆ

Հինգշաբթի, 28 Յունիս 2001ին, Լիզպոնի մէջ գումարուեցաւ Ընկերվար Միջազգայնականի Արեւելեան Եւրոպայի յանձնախումբի Ժողովը, որուն կը նախագահէր Լազո Քովաքս (Հունգարիա): Ներկայ էին յանձնախումբի անդամ մօտ 25 կուսակցութիւններու ներկայացուցիչներ: Ներկայ էր նաեւ Ընկերվար Միջազգայնականի ընդհանուր քարտուղար Լուիս Ալպարաժ: Ժողովին մասնակցեցաւ Է. Յ. Դ. պատուիրակութիւնը, բաղկացած Բիւրոյի անդամ ընկերներ Վահան Յովհաննէսեանէ եւ Մարիօ Նալպանտեանէ:

Սովորաբար Միջախին գումարուող յանձնախումբի կիսամեայ այս Ժողովը այս տարի յետաձգուած էր, եւ կը գումարուէր Ընկերվար Միջազգայնականի Խորհուրդի նիստի նախօրէին:

Ժողովին ներկայացուեցան մասնակից կուսակցութիւններու զեկոյցները: Է. Յ. Դ. կողմէ զեկոյցեց ընկեր Մ. Նալպանտեան: Իր զեկոյցին մէջ, ընկեր Նալպանտեան անդրադարձաւ յանձնախումբի նախորդ Ժողովին ի վեր՝ Հոկտեմբեր 2000, Հայաստանի մէջ տեղի ունեցած հիմնական իրադարձութիւններուն, Արցախի բանակցութիւններու հոլովոյթին, Է. Յ. Դ. Դաշնակցութեան գործունէութեան:

ՀԱՅԱՍՏԱՆ ԿԱՌՉԱԾ ԿԸ ՄԱՅ ՓԱՐԻԶԵԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Կ'ԸՍԵ Վ. ՕՍԿԱՆԵԱՆ

«Մեդիամաքս» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան, անդրադառնալով Մալթայի մէջ վերջերս կայացած Միւսթի խմբակի համաժամարակցական հանդիպումին, լոյս յայտնած է, որ միջազգային միջնորդները շրջան իրենց յաջողաւցելութեան ընթացքին կը յաղորդին Լ. Պարալայի տագնապին խաղաղ լուծման բանակցութիւնները վերադարձնել նախկին՝ փարիզեան փուլի ընթացքին ձեռք բերուած հասկացողութեան:

Ըստ Օսկանեանի, միջնորդները պիտի փորձեն վերացնել այն խոչընդոտները, որոնք յայտնուած էին Ժրնէլի մէջ կայանալիք հանդիպումին առաջ եւ պատճառ դարձած էին անոր լեւազանքը:

Օսկանեան նաեւ յայտնած է, թէ հայկական կողմը հաւատարիմ է փարիզեան սկզբունքներուն եւ նոր առաջարկներ պիտի չներկայացնէ:

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՏԱԳՆԱԴԻՆ ՄԱՍԻՆ ՀԻՆԳ ԿԵՏԵՐԷ ԲԱՂԿԱՑԱԾ ԲԱՆԱԶԵԻ ՄԸ

Հայաստանի Ազգային Ժողովի արտաքին յարաբերութիւններու յանձնախումբի նախագահ Յովհաննէս Յովհաննիսեան, որ կը գլխաւորէր 25ին 29 Յունիսին Եւրոպական Խորհուրդի խորհրդարանական վեհաժողովին մասնակցած հայկական պատուիրակութիւնը, երէկ

Շար.ը՝ էջ 10

1 ՅՈՒՆԻՍ 2001ԷՆ ՍԿՍԵԱԼ ԱՖՀԻԼԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՈՒՆԻՆ ՀԵՏԵԻԵԱԼ ԱՌԱԽԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- 1.- 100,000 տոլարի հիւանդանոցային ապահովագրութիւն
- 2.- 10,000 տոլարի կեանքի ապահովագրութիւն
- 3.- 5,000 տոլարի արկածի ապահովագրութիւն
- 4.- Info santé բժշկական ծառայութեան սպասարկութիւն

- 5.- 1000 տոլարի կրթաթոշակի ապահովագրութիւն
- 6.- Télémédecine միջազգային հիւանդանոց մը բժշկական երկրորդ կարծիքի ապահովում (second opinion)
- 7.- 1000 տոլարի բաղման ծախսերու մասնակցութիւն

- 8.- 100 տոլարի LOՍԻ «Ա. Պուլկորձեան» կեդրոնէն սպասարկութիւն
- 9.- 96 հիւանդանոցներու ցանց
- 10.- 126 տարրալուծարաններու ցանց
- 11.- GR քրոնիկ հիւանդութեանց ապահովագրութիւն
- 12.- MedNet ցանցի սպասարկութիւն

ԶԵՂՈՒՄ
ՆՈՐ
ԳՆԵՐ

ԱՖՀԻԼ. ԱՖԵՏԻ ԶԵՆԸ, Բ. ՅԱՐԿ ԸՆՈԱԶԱՅՆ. (01)242556 ԵՒ (01)242557:

ՆԱԽԱԳԱՀ Պ. ԱՍԱՏԵՐԻ ԸՆԴՈՒՆԵՑ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԵՐՐԻՆ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պերրի երեկ ընդունուեցաւ Սուրիոյ նախագահ Պաշ- շար Ասատի կողմէ. խորհրդակցութիւնները կեդրոնացան շրջանային հարցերու եւ Սուրիոյ եւ Լիբանանի դէմ խորհրդակցական սպառնալիքներուն վրայ:

Դամասկոսէն վերադարձին Պերրի հեռա- ձայնեց նախագահ Վոր. Էմիլ Լահուտի եւ Կալի տեղեկ պահեց նախագահ Ասատի հետ իր ու- նեցած խօսակցութիւններուն արդիւնքներէն:

Միւս կողմէ, խորհրդարանի նախագահը երեկ ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի յղած իր հեռագիրին մէջ իր ու խորհրդ- արանին անունով շնորհաւորեց անոր վե- րնորոշումը:

Պերրի մաղթեց, որ Անան կը շարունակէ իր ճիգերը՝ գործադրել տալու Միջին Արեւելքի վե- րաբերեալ ՄԱԿի ճիգերը, որպէսզի Իսրայէլ մի- ջազգային որոշումներէ վերջ մնացող բացա- ռութիւն ըլլայ զոգրի:

Պերրի ընդգծեց, որ ապիկա անհրաժեշտ է արդար եւ ամբողջական խաղաղութիւնը կեր- տելու եւ ապահովութիւն ու կայունութիւն հաս- տատելու շրջանին մէջ:

ՄԵՔԱՆԻՔԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

Ներքին գործոց նախարարութեան ընդհա- նուր տնօրէն Արապ Ղաշամ երէկ յայտարա- րեց, որ Յուլիս ամսուան ընթացքին մեքանիքի տուրքը պետք է վճարեն հետեւեալ թիւերը կրող փոխադրամիջոցներուն տէրերը.

- Սեփական ինքնաշարժներ Ա.՝ Պարզ թիւերով ինքնաշարժներ՝ թիւ 1.200.001էն թիւ 1.300.000 Բ.՝ «Բոտ»երով թիւեր՝ թիւ 140.001էն թիւ 148.000
 - Մոթոսիքլետներ՝ թիւ 35.001էն թիւ 42.000
 - Սեփական բեռնակառքեր եւ օթոպիւսներ՝ թիւ 185.001/ Մ էն թիւ 195.000/ Մ
 - «Կարմիր թիւ» ինքնաշարժներ՝ թիւ 87.001էն թիւ 88.000 եւ թիւ 1.909.001էն թիւ 1.911.000
 - «Կարմիր թիւ» օթոպիւսներ՝ թիւ 1.937.000էն թիւ 1.938.000
 - «Կարմիր թիւ» բեռնակառքեր՝ թիւ 1.928.001էն թիւ 1.929.000
 - Թիւերու փոփոխութիւն
- Ղաշամ երէկ նաեւ յայտարարեց, որ Յուլիս ամսուան ընթացքին իրենց հին թիւերը նոր (քրտերով) թիւերով պետք է փոխանակեն հե- տեւեալ թիւերը կրող ինքնաշարժները:
- Թիւ 1.200.001էն 1.300.000 ինքնաշարժներու գրանցման Տրքումիէ եւ շրջանային գրասեն- եակներուն մէջ, ըստ ինքնաշարժի գրանցման հիմնական վայրին:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

- ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ եւ առեւտուրի նախա- րար Պասէմ Ֆիշիան երէկ յայտնեց, որ Պէյ- րութ կը նպատակաւոր- րէ Եւրոպական Միութեան հետ գործընկե- րութեան համաձայ- նագիր կնքուով նոր շուկաներ տեղծել ի- րանական արտադ- րութիւններու համար:
- ՀՂԶ ՊԵՐՐԻՆ ԿԻՆՖԻՆ փոխ ընդհանուր քար- տուղար շէյխ Նալիմ Քասէմ երէկ նկատել տուաւ, որ տնտեսա- կան տագնապը ար- դիւնք է նախկին կա- ռավարութիւններու վարած սխալ քաղա- քականութեան: Ան հաստատեց, որ Հրդ- պայա տարակարծու- թիւններ չունի վար- չապետ Ռաֆիք Հա- րիրիի հետ:
- ՖԻՆԱՆՍԻ ԿԻՆՖԻՆ կան նշեց, որ Բոլորի- դարան շէյխ Նալիմ Քասէմ երէկ նկատել տուաւ, որ տնտեսա- կան տագնապը ար- դիւնք է նախկին կա- ռավարութիւններու վարած սխալ քաղա- քականութեան: Ան հաստատեց, որ Հրդ- պայա տարակարծու- թիւններ չունի վար- չապետ Ռաֆիք Հա- րիրիի հետ:
- ՊԱՍԵՐԻՆ մէջ երէկ բացուեց կա- տարներէն գնումի ամսուան, նախագահ Վոր. Էմիլ Լահուտի հովանաւորութեամբ: Ընկերային հարցերու նախարար Ասատ Տիպա ներկայացուց հանրապետութեան նախագահը:

- ՀԱՐԱՐԻ ականա- ցերծումի հարցերու բրիտանական խորհրդ- դատու խմբակին հետ աշխատող Հիւսէյն Նասիւն երէկ վիրաւոր- ւեցաւ Քէֆար Ռոմա- նի մէջ խմբակին տա- րած ականալիքներուն աշխատանքին ըն- թացքին ականի մը
- Մարտիրոս Թա- ւաքեանի մահուան առիթով, փոխան ծաղ- կեպակի՝ տէր եւ տի- կին Ալպի Նոյնուրի- եան 25.000 լ.՝ Հա- մազգային Կեդրոնա- կան Հիմնադրամին:

ԿԸ ՆՈՒՐԵՆ

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ ԸՆԴՈՒՆԵՑ ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱՊԵՏ ԸԸՍԸ

Նախագահ Վոր. Էմիլ Լահուտ երէկ ըն- դունեց այցելութիւնը նախկին վարչապետ Սեյիմ Հըսի, որուն կ'ընկերակցէր Ազա- յին Գործունէութեան Համախմբումի գոր- ծադիր յանձնախում- բի պատուիրակու- ցան երկրի տնտեսա- կան, ընկերային եւ կրթական հարցերը, ինչպէս նաեւ՝ շրջա- նային իրադարձու- թիւններն ու իրա- նանեան բեմին վրայ վարձագումները:

Հըս յայտարարեց, որ հանդիպումը շատ շինիչ էր եւ նախագահ Լահուտի հետ ար- ծարձած են երկիրն ու քաղաքացիները յուզող հարցերը՝ կեդ- րոնականով տնտեսա- կան, ընկերային եւ ապրուստի տագնապ- ներուն վրայ: «Նաեւ խօսուեցաւ անկախ դատական իշխանու- թեան, Լիբանանեան համալսարանին ու անոր վերականգնու- մի անհրաժեշտու- թեան, ինչպէս նաեւ՝ թշնամի Իսրայէլի հետ ճակատումին ու անոր սաստկացող սպառ- նալիքներուն մա- սին», ըստ ան:

Հըս յայտնեց, որ նախագահ Լահուտ պատրաստակամու- թիւն յայտնած է շա- րունակելու բոլոր մարկերէն ներս աշ- խատանքը՝ յուժելու համար քաղաքացիին դիմագրաւած հարցե- րը:

Նախագահ Լահուտ երէկ նաեւ ընդունեց

ԹՄՐԵՑՈՒՑԻՉԻ ՅԱՆՔԵՐՈՒ ՀԱՐՅԸ՝ ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ԱՌԱՐԿԱՅ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ գլխաւո- րեց ներքին գործոց, պաշտպանութեան եւ արդարութեան նա- խարարներ Էլիաս Մը- րի, Խալիլ Հըրաուիի եւ Նապիլ ժըսըրի հետ ժողով մը, որուն աւարտին Մըր յայ- տարարեց, թէ քննարկուած է կարգ մը շրջաններու մէջ թմրեցուցիչ բոյսերու ցանկի հարցը:



Ժողովի ընթացքին:

Մըր յայտնեց, որ այդ ցանքը փճացնելու աշխատանք պիտի տարուի ապահովու- թեան ուժերու կողմէ, բայց հիմնական հար- ցը ապրուստի դժուա- րութիւններ դիմազը- րաւող հողագործնե- րուն ալլընտրանք ապահովելն է, մանա- ւանդ որ այս ուղղու-

թեամբ օժանդակու- թիւններու խոստում- ները չեն յարգուած, ուստի այս ուղղու- թեամբ ալ ծրագիր մը պիտի գործադրուի:

Վարչապետ Հարի- րի երէկ նաեւ ընդու- նեց այցելութիւնները հանրօգուտ աշխա- տանքներու եւ փո-

խադրամիջոցներու նախարար Նաժիպ Միքայէլի, նախկին նախարար Տուատ Պուրաուի, ընդհա- նուր ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէն Վոր. Ժամիլ Սալիտի եւ Յորդանա- նի նախկին վարչա- պետ Թահեր Մասրիի:

«ՄԻՏԸԼ ԻՍԹ»Ի ՏԱԳՆԱՊԸ՝ ԴԵՊԻ ԼՈՒԾՈՒՄ

«Միտըլ Իսթ» օդա- նաւային ընկերու- թեան տագնապին լուծման ծիրէն ներս երէկ աշխատանքի նախարար Ալի Քան- սօ ժողով մը գումարեց ընկերութեան պաշ- տօնականներու եւ աշ- խատարներու սեն- տիքային նախագահ Մոհամէտ Ապպասի, վարիչ խորհուրդի

նախագահ Մոհամէտ Հուրի, աշխատաւո- րական ընդհանուր ինժեներական ծա- ռանքի աշխատանքի ղաւասան Դըսընի եւ վարչապետի խորհրդ- դական Ղապի Նուսե- ֆի հետ:

Նախարար Քանսօ ժողովին ետք յայտ- նեց, թէ համաձայնու- թիւն գոյացած է կարգ

մը հարցերու շուրջ, իսկ մնացեալ հարցե- րուն քննարկումը պի- տի շարունակուի 2ո- րեքշաբթի օր գումար- տող ժողովի մը:

Ապպաս գոհունա- կութիւն յայտնեց ժո- ղովի դրական մթնո- յորտին համար եւ ըսաւ, որ սենտիքայի գործադիր խորհուր- դին պիտի ղեկուցեց արդիւնքները շնչելու համար այսօր՝ Երեք- շաբթի, նախատես- ւած գործադրուի:

Այս ժողովին զու- գահեռ գումարուեցաւ ուրիշ մը, գլխաւորու- թեամբ նախարարու- թեան աշխատանքի հարցերու տնօրէն Ֆարէս Սաատի, օդա- չուններու սենտիքային եւ ընկերութեան վարիչ խորհուրդին ներկայա- ցուցիչներուն հետ:

Օդաչուններու սեն- տիքային նախագահ Մահմուտ Հունանի ըսաւ, որ այս ժողովը ոչ մէկ արդիւնք տուած է եւ վարիչ խորհուրդը դրական եւ շինիչ առաջարկ չէ ներկայացուցած: Ան յայտնեց, որ «Միտըլ Իսթ»ի պաշտօնեանե- րուն եւ օդաչուններուն վրայ ճնշումներ կը բանեցունին, որ ընդու- նին վարիչ խորհուր- դին պայմանները, բայց սենտիքան պիտի շարունակէ երկխօսու- թիւնը:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Վարդուհի Արզումանեան
Տէր եւ տիկին Մարգար Արզումանեան եւ գաւազուհի
Տէր եւ տիկին Ջարեհ Արզումանեան եւ գաւազուհի
Տէր եւ տիկին Մելոն Արզումանեան եւ գաւազուհի
Տէր եւ տիկին Ժան եւ Սիւզի Պորաթ եւ գաւազուհի
Տէր եւ տիկին Պեռնար եւ Արփի Սորսէլի
Տէր եւ տիկին Ռիչարդ եւ Ռուպինա Փիլոթ եւ գաւազուհի
Տէր եւ տիկին Ռոկերեան Արզումանեան եւ գաւազուհի
Տէր եւ տիկին Անդրանիկ Երկանեան եւ գաւազուհի
Արզումանեան ընտանիք
Երկանեան ընտանիք
Եւ համայն ազգականներ կը գլուծեն իրենց ամուսնոյն,
հօր, մեծ հօր, հօրեղոր, քեռայրին եւ հարազատին՝

ԲԻԻԶԱՆԴ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆԻ (Ծնեալ՝ Եղգկաթ, 1905ին)

Մահ, որ պատահեցաւ Կիրակի, 1 Յուլիս 2001ին, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատար- ւեցաւ Երկուշաբթի, 2 Յուլիս, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Էջմէֆիի Ս. Յակոբ եկեղեցու մէջ, ուրիշ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Հա- մուսի Ազգային գերեզմանատունը:

Ներկայ ընդունիլ իրեն մահազգ:

Ցաւակցութիւններ կ'ընդունուին Բանգուց- եային ընկալարան, Ժեքարու, Երեքշաբթի 3 եւ 2որեքշաբթի 4 Յուլիսին:

● Երկուշաբթի փոխան ծաղկեպակի նուիրա- տուութիւններ կատարել ազգային հաստատութիւն- ներու:

ԺԱՄԱՆԱԿԱԻՈՐ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԸ ՍՏԱՆԶՆԵՑ ԳՈՅՔԵՐԸ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ Լիբանա- նի ֆուտբոլի ֆետերասիոնի ընթացիկ գործե- րը վարելու եւ ընտրութիւններ կազմակերպե- լու առժամեայ մարմինին նախագահ Թոնի Խուրիի եւ անդամներու հետ քննարկեց ֆետե- րասիոնի նախկին պատասխանատուներէն ֆետերասիոնի գոյքերու եւ պարտաւորու- թեանց ստանձնումը: Որոշուեցաւ, որ այս գոր- ծողութիւնը տեղի կ'ունենայ կէսօրին:

Խուրի մարմինի անդամներ Անթուան Մը- նասսայի եւ Ալի Համիտի Սաքրի, ինչպէս նա- եւ ղեկուցաբեր Ֆատիա Հալաքի եւ դատական երդուեալ մասնագետ Թուֆիք Ալամի հետ ուղ- ղուեցաւ ֆետերասիոնի կեդրոնատեղի, ուր զի- րենք դիմաւորեցին կեդրոնատեղիի տնօրէն Ահմէտ Շաալանի եւ դրամական հարցերու պա- տասխանատու Իսամ Մասրի:

Խուրի եւ միւս անդամները ստանձնեցին ֆե- տերասիոնի շարժական եւ անշարժ գոյքերը: Խուրի վերահաստատեց, թէ մարմինին առաքե- լութիւնը ժամանակաւոր բնոյթ ունի եւ անոր նպատակը նոր ֆետերասիոնի ընտրութիւնն է:

Ստանձնումը ֆետերասիոնի պաշտօնեանե- րէ կատարելու նրբութեան մասին՝ Խուրի ըսաւ, որ անոնք գործընթացին օրինականութիւնը չեն խախտեր, եւ երդուեալ մասնագետի ներ- կայութեան տեղի ունեցող ստանձնումին մա- սին տեղեկագիր մը պիտի ներկայացուի պատ- կան պաշտօնատարներուն:

ԼԻԲԱՆԱՆԻ ՅՈՒՇԱԳԻՐ ՄԸ...

Շարունակուած Ա. Էջմէ

Խարագի Համմուտի փոխանցեց, որ Թեհրան կը դատապարտէ Լիբանանի եւ անոր գերիշխանութեան դէմ իսրայէլեան ոտնձգութիւնները եւ անվերապա- հօրէն գործող կը կանգնի Լիբանանի կեցուածքին ու իր հողը ազատագրելու նուիրական իրաւունքին:

Համմուտ յայտնեց, որ խօսակցութեան ընթացքին քննարկած են շրջանային զարգացումները եւ Խարա- գի գինք հրաւիրած է Թեհրան:

Շարէհի հետ խօսակցութեան ընթացքին քննար- կուեցան շրջանային զարգացումներն ու Խարագիի մազլոյդական քաղաքականութիւնը, Պեքաւայի մէջ սուրիական զորքին վրայ յարձակումին յոյսին տակ:

Խարագի սուրիացի իր պաշտօնակիցին վերահաս- տատեց Իրանի գորակցութիւնը Լիբանանի եւ Սու- րիոյ, ընդգծեց իսրայէլեան ոտնձգութիւններուն:

Խարագիի բանբերը յայտարարեց, որ Թեհրան խստիւ կը դատապարտէ Սաքրիի վրայ իսրայէլեան օդուժի յարձակումը եւ կոչ կ'ուղղէ՝ ամբողջութե- ամբողջական պետութեանց միասնութիւնը, զի միւս- լու համար իսրայէլեան ոտնձգութիւններուն:

Յորդանան եւ Եմէն միացեալ հաղորդագրութեամբ մը դատապարտեցին Լիբանանի մէջ սուրիական զոր- քին վրայ իսրայէլեան յարձակումը:

Եմէնի վարչապետ Ապալ Քաաթը Պաժմալի Յոր- դանան տուած այցելութեան եզրափակումին առի- ժով հրապարակուած հաղորդագրութիւնը ըսաւ, որ Լիբանանի մէջ սուրիական զորքի մը վրայ յարձա- կումը շրջանային վտանգաւոր մազլոյցում մըն է եւ խախտում՝ Լիբանանի գերիշխանութեան ու միջազ- գային օրէնքին:

Եմէն — Յորդանան գերագոյն յանձնախումբի ժո- ղովներուն եզրափակիչ հաղորդագրութիւնը նաեւ հաստատեց, որ Սանաա եւ Ամման կը կանգնին Լիբա- նանի եւ Սուրիոյ կողքին, ընդգծեց այս բռնարարք- ներուն:

ՊԵՐՆԱ ՊԵՐՈՒԹ ՊԵՏԻ ԱՅՅԵԼԷ

Արտաքին գործոց նախարարութեան իրազեկ աղ- րիւրներ յայտնեցին, որ Միացեալ Նահանգներու ար- տաքին գործոց նախարար Միչիլ Արեւելքի հարցը- րու օգնական Ուիլյամ Պրերնոյ այս շարաւիտներին պի- տի այցելէ Պէյրութ, իրանացի պաշտօնատարներ- րուն հետ քննարկելու շրջանային զարգացումներն ու նախարար Քոլին Փուրլի Իսրայէլ, Պաղեստին, Յորդանան եւ Եգիպտոս տուած այցելութիւններուն արդիւնքները:

ՂԱՏԱՊԱՐՏՈՒՄԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պեքաւայի մէջ սուրիական զորքին վրայ իսրայէլ- եան օդուժի յարձակումը դատապարտող բազմաթիւ յայտարարութիւններ կատարուեցան: Հանրապե- տութեան միւլթի շէյխ Սոհամէյն Ռաշիմ Քապպա- նի, նախկին վարչապետ Սեյիմ Հըս, Երեսփոխաններ Ուալիա Իոսօ, Ալի Հասան Խալիլ, Ղապի Ջաալէր, Ալի Պազի, Ուսթի Պաարինի եւ Ալի իրէյա դատապար- տեցին այս բռնարարքը: Նոյն իմաստով յայտարա- րութիւններ կատարեցին բազմաթիւ քաղաքական անձնաւորութիւններ եւ կազմակերպութիւններ:

ԱՐՅԱՆԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՖՈՆՏԻՆ

● Մարտիրոս Թաւաքեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպակի՝ Տէր եւ տիկին Բիւպանդ Ալվապեան 20.000 լ.՝

ԱՐԴԵՆ ԿԸ ԳՈՐԾԵ

www.homenetmentcentral.com

Շ. Ս. Ը. Ս.ի Կեդրոնական Վարչութեան համացանցի կայքը:

ԱՐԽԱԶԻՈՅ ՄԵՋ ԻՐ ԽԱՐԻՍԻՐ
ՓԼԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՄՈՍԿՈՒԱ ՉՅԱՐԳԵՅ ՄԵԿ ՅՈՒԼԻՍԻ ԺԱՄԿԵՏԸ

Կ'ԸՍԵ ԹԻՖԼԻՍ

Թիֆլիս լայտարարեց, որ Ռուսիա չէ յարգած Աբխազիոյ մէջ գտնուող իր Կիւտորական խառնիսի փակման ժամկէտը (1 Յուլիս), որ ճշդուած էր 2 տարի առաջ:

Նախագահական բանբեր Քախա Խմնատօժ լայտարարեց, թէ «Կուտուրա» խառնիսը տակաւին կը գործէ, հակառակ 1999ին Պոլսոյ մէջ կայացած ԵԱՀԿի վեհաժողովին գոյացած համաձայնութեան: Ան ըսաւ. «Ռուսիա խախտեց միջազգային համաձայնագիր մը, սակայն մենք պիտի շարունակենք բանակցութիւնները»:

Ըստ համաձայնութեան. Ռուսիա փակած էր Վալիանիի իր խառնիսը, սակայն ամբողջութեամբ չէր պարպած Սեւ ծովու վրայ՝ Աբխազիոյ մէջ, գտնուող խառնիսը: Կուտուրայի մէջ տակաւին կը մնան ռուս զինուորներ եւ Կիւտուրայի:

Ռուսները լայտարարեցին, որ տեղացի բնակչութեան պահանջով է որ չեն փակած խառնիսը, աւելցնելով, որ վրացական իշխանութիւնները չեն ապահոված փակման համար անհրաժեշտ պայմանները: Ռուս հրամանատար Լէոնիտ Իվաշով *«Ինթերֆաքս»* լրատու գործակալութեան լայտնեց. «Ըստ համաձայնութեան, Վրաստան պէտք էր երաշխաւորէր ռուսական ուժերու ապահով հեռացումը իր հողերէն»:

Միւս կողմէ, վրացի պաշտօնատարներ լայտնեցին, որ խառնիսը չփակելու տեղացիներու պահանջը ռուսներու դրդումով եղած էր, եւ թէ ռուս 1500 զինուորներ հաւանաբար մնան անջատողական նահանգին մէջ:

Կուտուրայէն անկախ երկու այլ խառնիսներու փակման շուրջ եւս բանակցութիւններ տեղի կ'ունենան: Ռուսիա 14 տարուան ժամանակամիջոց կը պահանջէ, մինչ Վրաստան միայն 3 տարուան պայմանաժամ կ'ուզէ տալ այդ երկու խառնիսներուն փակման համար:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՊՈՒԼԿԱՐԻՍ - ԹՈՒՐԻԻՍ
ՍԱՀՄԱՆԻՆ ՎՐԱՅ

ԹՐԲԱԿԱՆ

ՓՈՒԱԴՐԱԿԱՆՔԷ ՄԸ

ԿԸ ԳՐԱԴՈՒԻ 90 ՔԿ. ՀԵՐՈՅԻՆ

Պուլկարիոյ մաքսատուներու կեդրոնական տեսչութիւնը յայտնեց, որ թրքական սահմանին վրայ դէպի Պոսնիա ուղղուող թրքական փոխադրակառքէ մը գրաւում է 90 թվ. հերոյին, որ պահուած էր փոխադրակառքին յետմամասին մէջ: Չերքակաւած են երկու թուրք քաղաքացիներ:

Պուլկարիա, որ սահմանակից է Թուրքիոյ, Յունաստանի, Մակեդոնիոյ, Եոկոսլաւիոյ եւ Ռումանիոյ, կը գտնուի Ասիայէն դէպի Արեւմտեան Եւրոպա թմրեցուցիչի մաքսանցեցման «պալքանեան ճամբուն» վրայ:

Այս տարուան ընթացքին Պուլկարիոյ մէջ գրաւում է 796 թվ. հերոյին, որուն մեծ մասը Թուրքիոյ հետ սահմանին վրայ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԽԵՆԹ ԿՈՎՈՒ

ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՅ՝ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԵՋ

Աթենք երեկ լայտարարեց, որ լայտաբերած է խենթ կովու հիւանդութեան առաջին պարագան, եւ թէ արդէն սկսած է նոյն հոտին պատկանող անասուններու ոչնչացման:

Երկրագործութեան նախարար Ճորճ Անտէրիթիս մամլոյ ասուլիսի մը ընթացքին լայտնեց, թէ հիւսիսային Յունաստանի Սերես քաղաքի սպանդանոցներէն մէկուն մէջ կատարուած նախնական քննութեան մը ընթացքին, 34 ուղեղի նմուշներէն մէկը դրական արդիւնք տուած է հիւանդութեան գոյութեան: Յաւելեալ քննութիւններ հաստատած են առաջին քննութեան արդիւնքը:

Յունիսի կէսերուն խենթ կովու հիւանդութիւնը առաջին անգամ ըլլալով լայտաբերուած էր Արեւելեան Եւրոպայի մէջ, երբ Չեչենիոյ մէջ նշեալ հիւանդութեան տառապող անասուններ ախտաճանաչուած էին:

Հիւանդութեան Յունաստանի մէջ լայտնութիւնը յուրին լայտարարութիւնը կը պուգադիպի Ե. Միութեան պաշտօնատարներու այն լայտարարութեան, թէ Եւրոպայի մէջ կովու միակ պատու մի քանակը բարձրացած է երբ նախապէս խենթ կովու հիւանդութեան պատճառով այդ քանակը զգալի անկում կրած էր:

Միւս կողմէ, Իսրայէլացի փորձագէտներ Երկուշաբթի օր լայտարարեցին, թէ խենթ կովու հիւանդութեան ախտաճանաչումը կարելի է կատարել մէկի քննութեան մը միջոցով: Յարդ այդ հիւանդութեան ախտաճանաչումը կարելի էր կատարել հիւանդին մահէն ետք, անոր ուղեղը քննելով: Փորձագէտները յաջողած են հիւանդութենէն տառապող անձերու եւ կենդանիներու մէկին մէջ լայտաբերել ախտանշան

Շաբ.՝ էջ 10

ՓՈՒԹԻՆ ԵՒ ՇԻՐԱՔ ԿԸ ՄՆԱՆ ՏԱՐԱԿԱՐԾԻՔ՝ ԵՈՒԿՈՍԼԱԻՈՅ ԵՒ ՉԵՉԵՆԻՈՅ ՇՈՒՐՋ

Ռուսիոյ եւ Ֆրանսայի նախագահներ՝ Վլատիմիր Փութին եւ Ժաք Շիրաք, երէկ Կրեմլինի մէջ իրենց վեհաժողովէն ետք լայտարարեցին, որ համաձայն գտնուած են արծարծուած բազմաթիւ հարցերու շուրջ, սակայն տարակարծիք կը մնան Եուկոսլաւիոյ եւ անջատողական Չեչենիոյ շուրջ:

Շիրաք լայտարարեց, որ բազմաթիւ հարցերու շուրջ «դէպի համաձայնութիւն ուղղուած են», իսկ Փութին ըսաւ, որ «գրեթէ բոլոր հարցերուն պարագային իրենց տեսակետները նոյնն են»: Երկու նախագահները նաեւ յանձնառութիւն տազնապիսի պատճառով Փարիզ – Մոսկուա տարակարծութիւնները հարթելու համար:

Չորեքշաբթի խուսփելով ամերիկեան հրթիռային վահանին մասին ակնարկութիւն կատարելէ՝ Շիրաք եւ Փութին միացեալ լայտարարութեան մը մէջ իրենց ընդդիմութիւնը լայտնեցին այն բոլոր քայլերուն դէմ, որոնք կը սպառնան ականահարել միջազգային ապահովութեան առկայ դրութիւնները:

Այսուհանդերձ Փութին եւ Շիրաք միացեալ մամլոյ ասուլիսի



Շիրաք եւ Փութին մնացին տարակարծիք՝ Եուկոսլաւիոյ եւ Չեչենիոյ շուրջ:

մը ընթացքին բացալայտօրէն խօսեցան իրենց տարակարծութիւններուն մասին: Փութին քննադատեց Եուկոսլաւիոյ նախկին նախագահ Սլոպոյան Միլոշեւիչը Լա Հէյի ատեանին յանձնումը ողջունող Ժաք Շիրաքի կեցւածքը, եւ պաշտպանեց Չեչենիոյ մէջ Մոսկուայի վարած քաղաքականութիւնը:

Շիրաք ողջունեց Միլոշեւիչի Լա Հէյի ատեանին յանձնումը՝ այս քայլը նկատելով ժողովրդավարութեան յաղթանակը՝ բռնատիրութեան վրայ:

Փութինի պատասխանը կտրուկ էր: «Կ'ուզենք, որ այս շրջանին մէջ յաղթանակեն ժողովրդավարութիւնը եւ կայունութիւնը: Միլոշեւիչի յանձնումը պիտի նպաստէ», որ շրջանին մէջ յաղթանակէ ժողովրդավարութեան:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՄԻԼՈՇԵՒԻՉԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԵՐԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՃԱՄՊՐՈՒԿԸ ԱՆՀԵՏԱՅԱԻ

Եուկոսլաւիոյ նախկին նախագահ Սլոպոյան Միլոշեւիչի պաշտպան փաստաբանները երէկ Պեկրատէն ուղղուեցան Լա Հէյ, Միլոշեւիչը պաշտպանելու համար ՄԼԿի ատեանին առջեւ:

Լա Հէյի ատեանին յանձնուելէ հինգ օր ետք, Միլոշեւիչ այսօր դէմ յանդիման պիտի գալ իրենց ամբաստանողներուն հետ: Կը նախատեսուի, որ ան մերժէ իր դէմ ուղղուած ամբաստանութիւնները՝ 1999ին Քոսովոյի մէջ ցեղային մաքրագործումի հարցով:

Փաստաբաններ Չտենքօ Թոմանովիչ եւ Տրակաւ Բրկովիչ հանդիպում ունեցան Լա Հէյի ատեանին բարձրաստիճան դատարներու հետ՝ իրեն Միլոշեւիչի պաշտպան փաստաբաններ արձանագրուելու համար:

Երկու պաշտպան փաստաբանները կը ծրագրէին երէկ կէսօրին հանդիպում մը կայացնել Միլոշեւիչի հետ: Սակայն ատիկա չիրականացաւ, որով հետեւ Միլոշեւիչի անձնական իրեր պարունակող ճամպրուկը, զոր փաստաբանները իրենց հետ Լա Հէյ կը տանէին, օդակայանին մէջ անհետացաւ:

Միլոշեւիչ ճամպրուկին մէջ գտնուող նիւթեր պէտք ունէր առա-



Միլոշեւիչի հետեւողը մը բողոքի ցոյցի ընթացքին Պեկրատի մէջ:

ջին ունկնդրութեան միջոցին պահող օգտագործելու համար:

«Թանկեղ» լրատու գործակալութիւնը համոզողեց, որ ճամպրուկին մէջ կը գտնուէին զինքներ, հագուստեղէն եւ դրամ:

Միլոշեւիչ կը մերժէ Լա Հէյի ատեանին օրինականութիւնը: Ան իր դէմ ուղղուած ամբաստանութիւնները կը համարէ քաղաքական եւ կրօն, որ ՕԹՆՆի ղեկավարները պէտք է դատուին պատերազմական ռմբագործներ, ոչ ինք:

Մինչ այդ, Պեկրատի մէջ եուկոսլաւ ճամպրուկը կը գրէր, որ Միլոշեւիչ եւ իր կինը՝ Միրա, կը ծրագրեն օտար փաստաբաններ վարձել: Միլոշեւիչ ամուրի մտիով Միացեալ Նահանգներու նախկին ընդհանուր դատախազ Ռամսի Քլարքը:

Միւս կողմէ, Սերպիոյ վարչապետ Չոբան Ճինճիչ, որ Միլո-

թինը կը կասկածիմ, ըսաւ ան:

Փութին նաեւ բուռն կերպով պաշտպանեց Մոսկուայի վարած քաղաքականութիւնը՝ Չեչենիոյ մէջ: Ան բարձրախօսը խլեց եւ իր պատասխանը տուաւ, երբ լրագրող մը Շիրաքի հարցումը լողեց Չեչենիոյ տազնապիսի նկատմամբ Փարիզի կեցուածքին մասին:

«Մոսկուա Չեչենիոյ մէջ պայքար կը մղէ վարձկաններու դէմ: Կը խորհիմ, որ եթէ վարձկաններ նոյն նպատակով մուտք գործեն հարաւային Ֆրանսա, Փարիզ պիտի վարեն նոյն քաղաքականութիւնը», շեշտեց ան:

Նախագահներ Փութին եւ Շիրաք նաեւ անդրադարձած են Լ. Ղարաբաղի տազնապի խաղաղ լուծման գործընթացին:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՄԱԿԵԴՈՆԻՈՅ ՏԱԳՆԱՊ

ՓԱՐՏԻՈՒ ՈՒՆԵՅԱԻ ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ



Փարտիու՝ ձախից, կը խորհրդակցի Մակեդոնիոյ ճախագահ Պորիս Թրայնովսիի հետ:

Մակեդոնիոյ մէջ ամերիկացի լատուկ պատերազմի ձեյմս Փարտիու երէկ խորհրդակցութիւններ ունեցաւ մակեդոնացի քաղաքական ղեկավարներու հետ, մինչ ծագումով ալպանացի ըմբոստներ կը լայտարարէին, որ կը ծրագրեն ընդլայնել իրենց ազդեցութեան ծիրը:

Մակեդոնական բանակի մէկ բանբերը ըսաւ, որ բանակը ուղղաթիռներ ունեցած է ալպանացի ըմբոստներու դիրքեր Թերովոյի եւ Ռատուայի մէջ՝ իրեն հակադարձութիւն մակեդոնացի զինուորի մը սպանութեան:

Իր կարգին, ալպանական Ազգային Ապստաքութեան Բանակը լայտարարեց, որ ստիպւած է իր ազդեցութեան ծիրը ընդլայնել, եւ ալդպէս պիտի քնէ Մակեդոնիոյ մէջ բոլոր ուղղաթիռներով:

Նոր բախումները ցուցանիշ են, որ Փարտիու եւ Եւրոպական Միութեան պատուիրակ Ֆրանսուա Լէոթար կը դիմագրաւեն դժուար կացութիւն մը՝ համոզելու համար կողմերը, որ պիտի տազնապը լուծեն քաղաքական միջոցներով:

ՕՓԷՔ ԱՆՓՈՓՈՆ ՊԻՏԻ ՊԱՅԵ ՔԱՐԻՒՂԻ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՏԱԾՄԱՆ ՔԱՆԱԿԸ

ՎԻԵՆՆԱ, 2 (ՌՈՅԹԸՐԸ).- ՕՓԷՔ Երկուշաբթի օր լայտնեց, որ հաւանաբար անփոփոխ պիտի պահէ քարիւղի արտադրութեան ու արտածման քանակը, հակառակ անոր որ Իրաք առկախած է արտածումը:

ՕՓԷՔի քարիւղի նախարարները Երեքշաբթի օր (այսօր) հանդիպում մը պիտի ունենան Վիեննայի մէջ որոշում տալու համար քարիւղի արտադրութիւնը աւելցնելու կարիքներուն մասին: Սակայն ըստ նախատեսութիւններուն՝ անոնք հաւանաբար անփոփոխ պահեն արտադրութեան քանակը:

Լիպիոյ ներկայացուցիչը՝ Ահմէտ Ապտէլբարիմ ըսաւ, որ Երեքշաբթի օրուան (այսօրուան) հանդիպումը հերթական նիստ մըն է, որուն ընթացքին արտակարգ հարցեր պիտի չարծարծուին: Ան աւելցուց, որ կարիքը չկայ աւելցնելու քարիւղի արտադրութիւնը:

Իրաքեան քարիւղի արտածման առկախումին լոյսին տակ, կը նախատեսուէր, որ ՕՓԷՔի նախարարները որոշեն բարձրացնել արտադրութիւնը՝ գոցելու համար միջազգային շուկային վրայ ստեղծուած բացը: Սակայն քարիւղի գիններու անկումը (վերջերս) պատճառ դարձած է, որ ՕՓԷՔ անփոփոխ պահէ քանակը:

ԼԻԹՎԱՆԻՍ

ՀԱՄԱՅՆԱՎԱՐ ԱԼԿԻՐՏԱՍ ՊՐԱԺՈՒՍՔԱՍ՝ ՎԱՐՉԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ

Լիթւանիոյ նախագահ Վալտաս Ատամբուս երէկ ձախակողմեան ղեկավար Ալկիրտաս Պրաժուսպուս ներկայացուց Երկրի խորհրդարանին, որ մէկ շաբաթուան ընթացքին պէտք է քուէարկութիւն կատարէ վարչապետութեան անոր թեկնածութեան շուրջ: Պրաժուսպաս նախկին նախագահ մըն է եւ եղած է երկրի վերջին համայնավար ղեկավարը:

Երկու շաբաթ առաջ սեփականաշնորհման եւ այլ բարեկարգումներու շուրջ ծագած անհամաձայնութիւններու պատճառով փոյլ եկած էր վարչապետ Ռոյալտաս Փաքսասի համաձայնական կառավարութիւնը: Յարմարագոյն թեկնածու նկատուած էր 68 տարեկան Պրաժուսպասը, որ կը ղեկավարէ Ընկերվար ժողովրդավարական Կուսակցութիւնը:

Իր թեկնածութեան լայտարարութենէն ետք, Պրաժուսպաս խօսք առնելով խորհրդարանին մէջ, ըսաւ. «ՕԹՆՆի եւ է. Միութեան անդամակցիլը, եւ դրացի երկիրներու հետ բարեկամական յարաբերութիւններու հաստատումը մեր հիմնական նպատակները պիտի ըլլան»: Ընկերվար ժողովրդավարները եւ իրենց դաշնակիցները կը հաւատարացնեն, թէ 141 երեսփոխաններէն 82ին քուէները բաւարար են վաւերացնելու համար Պրաժուսպասի թեկնածութիւնը:

Շաբ.՝ էջ 10

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐՈՒ
ԲԱՇԽՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Պատմաբանը անցեալ դարու սկիզբի դէպքերուն
բաւին փաստագրական նիւթերով կը ներկայացնէ
օրիսցիներուն գոյապայթարը:

**ԱՀԱԲԵԿԶՈՒԹԵԱՆ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԵՐԵՍԸ՝
ԲՈՆԱՏԻՐՈՒԹԵԱՆ ԽԱՂԱՔԱՐՏ**

Ահաբեկչությունները երեւոյթը առանձնապէս դիտելով՝ քաղաքակիրթ մարդուն համար անմիջապէս քստմնելի պատկեր մը կը ներկայանայ. մարդկային անմեղ զոհեր, արիւն, աւեր ու ողբերգութիւն: Այս քստմնելի պատկերին ամենաթարմ օրինակն է Օթլահոմայի ահաբեկչական արարքը, որ բազմաթիւ անմեղ կեանքեր

Ահաբեկչությունն այս բացասական երեսը ընակա-
նաբար հանրային ու քաղաքական ժխտական կար-
գիք ձեւաւորեց անոր նկատմամբ եւ աստիճանաբար
հանրեկոնիթեան դէմ պայքարը մտաւ միջպզգային ու
միջպետական համապարփակցութեանց ու հանդիմ-
աւորմաներուն օրակարգին մէջ: Ահաբեկչութեան դէմ
պայքարի ալիքը միջպզգային օրէնքին մէջ սկսաւ
դնդոթուած ձեւով տեղաւորուել 80ական թուական-
ներուն, եւ ի վերջոյ հասաւ այն անվիճելի կացութեան
որ ահաբեկչութեան ամէն երեւոյթ դատապարտելի
մարդկային հաւաքականութեան կողմէ:

Համամարդկային մակարդակով ձեւակերպում
այս մեթոդորտին մէջ, եւ ինչպէս քաղաքակրթ մտէն
խնայ գաղափար, ահարեկշտեան դէմ պայքարը եւս
հանրկաման առարկայ դարձաւ եւ կը շարունակ
դարնալ մեծապետական շահերու: Իւրաքանչիւր պե-
տութիւն իր հակաահարեկական դիրքորշումը
սկսաւ որդեգրել տեղի, ժամանակի ու պարագայի
համաձայն: Մէկուն համար քիւրտ կուռղիներ հալա-
ծելու Թուրքիոյ քայլերը երկրին մէջ կարգ ու կանոն
հաստատել է, հակաահարեկական պայքար է, միւ-
րին համար՝ ահարեկշութիւն: Մէկուն համար Խորա-
ղէլի դինուորին կողմէ պաղեստինցի ցուցարարին
զլալ կրակելը արտուծաւ ինքնապաշտպանութիւն
է, հակաահարեկական պայքար, միւսին համար ահա-
սեկշութիւն: Բազմաթիւ են նաեւ երկու չափ երկու
կշիռի օրինակները: Քիւրտերու վրայ գործադրուած
ճնշումն ու հալածանքը արդարացնող շատ դիւրին
կը դատապարտէ չեզնչներու դէմ գործադրուած
հալածումն ու հալածանքը եւ այլն:

Քաղաքականութեան անբարոյականութեան մասին բազմաթիւ հաստատուութեք եղած են, ու տեղ մը խնդիրն ոք ընդունելի կը նկատէ յայ անբարոյականութիւնը, որուն համար գեղեցիկ րաւութեք ալ ննարուած են. ճարպիկութիւն, դիւննագիտական բարձր կարողութիւն եւ այլն: Բայց ընթացքներ կան, որոնք նոյնիսկ անբարոյականութեան ընդունելի սահմաններէ կ'անցնին, երբ բացայայտ սուտերով ու կեղծիքներով կ'առաջնորդուին: Այս սահմանով անցնելու ամէնէն վառ օրինակը Թուրքիոյ ընթացքն է, որուն համարող սուտութիւնը կանգնած է մարդասպանութեան, ցեղասպանութիւններու եւ նոյնիսկ կազմակերպուած պետական ճահաբեկչութեան առաջի մղվարչ: Ո՞վ չի յիշեր Սոււտուրլուքի մէջ ինքնաշարժարկածի մը պատճառով բացայայտուած, վարչապետ Թանսու Զլիշիի անմիջական զիտակցութեամբ գործարդուած կէ պետական նիւթական աղբիւրներէ սնանած թրքական պետական ճահաբեկչութեան ծայրերը: Ո՞վ ծանօթ չէ Թուրքիոյ մէջ ի գործ դրուած մարդկային իրաւունքներու ոտնակոխման, քիւրտերուն նկատմամբ գործադրուած սպանդին ու հալածանքին: Եւ այս բոլորն ետք Թուրքիա կը փորձէ ինքզինք ներկայացնել ահաբեկչութեան գոհ եւ ճահաբեկչութեան դէմ մղուած պայքարի ջհակիր, եւ այդ

Բոլոր փորձերը կը կատարուին պատմական իրողութիւններու բացայայտ խեղաթիւրումով ու սուտերով՝ վրայ կառուցուած կեղծ հաստատումներով:

Թուրքական այս վարքագծի վերջին վկայությունը ՍԱՀ-ի մէջ Թուրքիոյ դեսպան Ումիթ Փամիրի տարաձայնակն է, որուն մէջ տրամադրանքներէն զուրկ կառուցուածքով կը փորձէ ալ ու ձախ ահաբեկչութեամբ ամրաստանել Հայաստանը, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը եւայլն, որոնք, դեսպանին պնդումով, 30 Թուրք զիւստագէտներ սպաննած են։ Այսպէս է, որ Հարիւրաւոր Հայ մտաւորականներ սպաննած, 1.5 միլիոն հայու կեանք խլած, թիւրքերու, արարներու, յոյներու, ասորիներու նկատմամբ ցեղասպանութիւն իրականացուցած ու դեռ շարունակող Թուրքիա կը փորձէ ահաբեկչութեան զոհի չափի հազնիլ եւ իր տարրական իրաւունքներուն համար պայքարող իսկական զոհը ամրաստանելու աթորին նստեցնել։ Այսպէս է, որ պետական ամրող Հնարաւորութիւնները պետական ահաբեկչութեան ծաւալեցնող պետութիւնը կը փորձէ շահագործել ահաբեկչութեան դէմ պայքարելու եւ անոր վերջ տալու մարդկային վսեմ գաղափարը։ Այսպէս է, որ սուղ մապաշտ պետութիւններ կը մոլորեցնեն հանրային կարծիքը եւ իրենց ազգային իրաւունքներուն համար պայքարող ժողովուրդներուն նկատմամբ բարբարոսութիւնները կը հրամայեն իրեն հակաահաբեկչական միջոցառումներ։ Այսպէս է, որ իրաւագրկուած ազգերու մղած ազգային սգատագրական արդար պայքարի ճակտին փակցուցած են ահաբեկչութիւն պիտակը եւ այդ պայքարին նուիրուած գաղափարապաշտ մարտիկը նոյնացուցած են մարդասպան ահաբեկիչին հետ։

Ցաւալին այն է, որ վերոնշեալ նենգ քարոզչու-
թիւնը շատ լաճախ լաջողութիւն կը գտնէ եւ կը ծա-
ռայէ իսկական ոճրագործի նպատակին, մանաւանդ
երբ այդ ընթացքին դէմ ծառանակալու կամեցողութիւնը
իւր բացակայի:

ՄԱԿԻ մէջ Թուրքիոյ ներկայացուցիչի յերևուանք-
ներուն դէմ կենսալու կամեցողութիւնը բարեբախտա-
բար դրսեւորուեցաւ Հայաստանի ներկայացուցիչը
Մովսէս Արէշլեանի կողմէ, որ պատասխան նամակ մը
չըմանառութեան մէջ դրաւ ՄԱԿԻ մէջ: Ի տարբերու-
թիւն Հայաստանի նախկին իշխանութիւններու ըն-
թացքին, Արէշլեան պետական պաշտօնեայէ մը սպաս-
ւած զսպուածութեամբ արժանի պատասխանը տուաւ
«Հայաստանն ու սփիւռքը աշայութիւնը վարկաբեկե-
լու» միտումն ունեցող թրքական կառավարութեան
չղթայազերծած արշաւին:

Թուրքիոյ ու անոր նման պատեհապաշտ ու ռազմապաշտ երկիրներու օրինակը նկատի ունենալով կարելի չէ հաւատարմութիւն ձևակապեալապէս քողիւն տակ ընթացող ռոյրը քայլերուն, երբ անաւանորոշ ան րաջալայտ խաղաքարտի վերածուած է բռնատիրութիւններու ձեռքին, ազգային իրաւունքներու համար մղուած պայքարները ճնշելու իբրեւ միջոց։ Այս վերջինին կենդանի օրինակն է Թուրքիա, որ պետական համարեկունութեամբ կը ճնշէ իր սահմաններուն մէջ առկա ազգային եւ կրօնական շարժումները, միշտ ահաբեկչութեան դէմ պայքարելու պարտուակով։

« Z w u p t n i p »

ԹՈՒՐԶԵՐԸ ՈՒԱԶԻՆԿԹԸՆՈՒՄ «ՇԱՅԵՐԻ ԿԱՏԱՐԱՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ» ՅՈՒԺԱՐՁԱՆ ԵՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՈՒԱՇԻՆԿԹՆԻ ԵՒ ՀՐԷԱԿԱՆ
ԿԱՌՈՅՑՆԵՐԻ ԹՈՒՐՔԱՄԷՏ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ԳՐԱԽԱԿԱՆՆ Է

1915ի Հայոց Ցեղասպանութեան հարցը քանի դեռ հարուենակում է արժարծուել եւրոպական երկրներէ խորհրդարաններում, հարուենակուելու է հարցի արծարծմանը թուրքիայի հակազդեցութիւնը, եւ նա չի հրաժարուելու հակաքայլերից: Հարցը, սակայն, հակազդեցութեան թուրքական զրոսեւրումները չեն, ոչ էլ նրա թակաքայլերի սնանկութիւնը, ինչը պարզորոշ երեւաց, երբ Հայոց Ցեղասպանութիւնը ճանաչելու հարցում Ֆրանսայի օրինակին հետեւեցին իտալիայի եւ Զուիցերիայի խորհրդարանները, այլ այն աներեւակայելի յերիւարանքերը, որոնք ճանաչման գործընթացը կասեցնելու համար թուրքիան տարածում է հայերի վրայ:

«Արեւելեան Անատո-
լիայում խաղաղ թուրք
բնակչութեան դէմ հայե-
րի կատարած Ֆեղասպա-
նութեան» թուրքական
պնդումները իրրեւ յե-
րիւրանք ոչ այնքան անե-
րեակայելի, որքան ծի-
ծաղելի են: Սակայն դա
չխանգարեց, որպէսզի
ներանք Կարսի, իրզլիրի
էրզրումի պէս քաղաքնե-
րում կառուցեն թուրքե-
րի նկատմամբ այսպէս
կոշտած հայերի կատա-
րած Ֆեղասպանութեան
յուշարձաններ: Ըստ երե-
ւոյթին Հայոց Ֆեղասպա-
նութեան միջազգային
ճանաչման գործընթաց
ծաւալումը զուգընթաց
այդպիսի յուշարձաննե-

րի թիւը թուրքիայում
աճելու է, հնարաւորու-
թեան սահմաններում
թուրքերը փորձելու են
նմանօրինակ յուշար-
ձաններ կառուցել երկրի
սահմաններինց դուրս,
օրինակ՝ Միացեալ Նա-
հանգներում:

Յամենայնդէպս, նրանք արդէն Միացեալ Նահանգներում սկսել են համարմանն նախաձեռնութիւն ցուցարեբել: Այդ մասին «Միացեալ Նահանգներում ըոր յուշարան» խորագրով Յունիսի 18ի համարում տեղեկացնում է թուրքա-տեղի «Ննի մ'եսամ» թերթը: Անա թէ ինչ է գրում. «Թուրք - ամերիկեան միութիւններին համագումարը, որ Միացեալ Նահանգներում բնակուող թուրքերին համախմբեալու նպատակով է տեղ-ծուել, օրերս 40 հոգանոց մի պատուիրակութիւն ղեղարկեց Թուրքիան: Ունապարհորդութեան ըջջանակներում պատ-խիրակութիւնը եղաւ իդ-րորում, որտեղ այցելեց իրենց Յեղատպանութեան յուշարձան ու համանուն թանգարան: Վերոյիշեալ համագումարի նախա-գահ ղոկաւ: Օրձան Քաշ-ամաքչաանն ասաց, որ իրենց կազմակերպու-թիւնը Ուաշինկթընում պատաւասուում է Յեղա-պանութեան ենթարկը-ւած թուրքերի յուշար-ձան կառուցել այն յու-շարձանի կողքին, որը Միացեալ Նահանգներին յայկեան յովիններն էին կառուցել»:

Որքան յայտնի է, յաշիկվթընում Մեծ Ղզեռնի յուշարձան գոթութիւն չունի: Թէ ե՞րբ ի կառուցելու, զժուար է ասել: Բայց որ Միացեալ Նահանգների մայրաքաղաքում «Թուրքերի սկստամար հայերի կասկածման Յեղասպանութեան» յուշարձան կառուցելու հարցում Թուրք ամերիկեան միութիւնները համագումարը ճշտականօրէն է տրամադրուած, ակնյայտ է: Կատի ունենալով Հայոց Յեղասպանութեան հարցում պաշտօնական Ուսանիկթընի Թուրքամէտ իրիքորոշումն ու Յեղասպանութեան բանաձեւերի չէզբացմանը պատասխուելու Միացեալ Նահանգների հրէական առույցների հաւաստիաւումները Թուրքիայի ղեկավարներին, Թուում է, չէ՞ր լողորդին անհմտ չէ՞նք զորոյ առական յուշարձանի առնչութեամբ երոյնչեալ համագումարի վճռականութիւնը: Երեմն ղա կը կառուցուի, իսկ Ուսանիկթընի Թուրքամէտ ղիրքորոշումն ու հրէական կասկածների հաւաստիաւումները կը ղառնան Թուրքերի նկատմամբ սսպէս կոչուած հայերի ղատարած Յեղասպանութեան յուշարձանի կառուցման գրասկայր:

ՅԱԿՈԲ ՉԱԲՐԵԱՆ

« ʌ q q »

ՊԱՐԱՆՔԵԼՈՎ 250 ՀԱՋԱՐ ՏՈԼԱՐԻ ԿՆԱՍՈՒՅ ՀԱՏՈՒՑՈՒՄ

ՕՀԱՆ ԴՈՒՐԵԱՆ ԴԱՏ ԿԸ ԲԱՆԱՅ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ
ՄՇԱԿՈՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԴԵՄ

Երեւանի Օփերայի եւ Պալէսթատրոնի նախկին ղեկավար իակ ներկայիս ցած ապտուռ, խմբավոր Օճան Դուբեան Ուրբաջ, 250 Զուհիարի, Երեւանի Նորք - Մարաշ, Համայնքներու առաջին ատենանիս մօտ իր պաշտօնագրիկումին համար դատ բացած է Հայաստանի կառավարութեան մշակութային նախարարութեան ղէմ 250 չազար տղարի վնասուող փոխ հատուցում պահանջելով:

Նոյն օրը Հայաստանի Լրագրողնե-
րու տան մէջ մամուլը ասուլիս մը տա-
րով՝ Օ- Դուրեանի պաշտպան պիտոտ
ման Տիգրան Զանոյեան այս մասին
մանրամասնութիւններ փոխանցեց
յայտնելով, որ վերոյիշեալ գումարը կը
վերաբերի միայն խմբավարին կնոջ
Ալեյն Դուրեանի կրթման տնտեսին, իսկ
ընդհանուր վնասները չատւել են:

Հաս Տ Ջանոյեանի, 10 տարի առաջ Օ. Դուրեան Հայաստանի կառավարութեան կողմէ Յրանալէն աշխատանքի հրաւիրուած է, սակայն անոր համար պարելու եւ աշխատանքի պայմաններ չեն ստեղծուած: Այս իրողութիւնը, ինչպէս նաեւ իր պաշտօնազրկումը, մեծապէս լի-րաւորած են մեծ երաժիշ-տը, որուն պատճառով ան որոշած է այս աշնան ան-վերադարձ կերպով հեռա-նալ Հայաստանէն, սա-կայն նախքան մեկնիլը ան կը նախատեսէ հրաժեշտի համերգ մը տալ:

Դատին իրաւական եւ
բարոյական փաստարկնե-
րը ներկայացնելով՝ Տ.
Ջանոյեան յայտնեց, թէ
խմբավարին աշխատանքի
իրաւունքը խախտած է,
որովհետեւ ան զմաճ
զլիսառոր խմբավարն ոչ ա-
նակուած է։ Այս տիտղոսը

տարիքային սահմանում չունի եւ ետ չի
կրնար առնուիլ:


«Ստորագրող պետք է մահանայ
խմբավորական վահանակին առջև»,
խմբավորականի փայտիկով ձեռքից»,
ընդգծեց ան եւ տարակոյտ յայտնեց, որ
մշակութիւն չախարհագրութիւնը առողջա-
կան եւ հոգեբանական նկատառումնե-
րով գործէ արձակած է իր պաշտպան-
եալը:

Պաշտպան փաստաբանը ընդգծած է նաեւ, որ տրուած պատճառաւորանութիւններէն մեծ վնաս չստացուած են միջազգային ճանաչում վայելող երաժիշտի համբաւին: Թէեւ ներկայացուած դատողահանութիւն կարելիութիւններ չափէին, սակայն են իրնայ համահայկական, յիմնականներէն զուրկ գալ:

«ԱԶԴԱԿ»-Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ
ԹԻԻԵՐԸ
«ԱԶԴԱԿ»-Ի ՌԵՏԿԱԿՈՆԵՐՈՒ ՌԱՄԱՐ
ՌԵՏԱՃԱՎԱՆԵՐ ՌԵՏԻԵԼԵԿՏԻՎՈՒՆԸ-
258526, 260115 և 241274:

U S I L

ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ՈՒՇԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ



FREE OF CHARGE
ԱՇԱՐԻ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ
ԿՐԿՈՒԹԻՒՆԸ ՁՐԻ

Է. ԱՖԵՏԻ ՇԵՆԲ Ք. ՅԱՐԿ
01-242556 և 01-242557

ՄԱԿԻ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՋՈՒ
6 ՅՈՒՆԻՍ 2001 ԹՈՒԱԿԻՐ ՆԱՄԱԿԸ՝ ՈՒՂՂՈՒԱԾ ՄԱԿԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ

8 Մայիս, 2001-ին ՄԱԿ-ի մեջ Թուրքիոյ մնացուց
ներկայացուցիչներ շրջանառու-
թեան մեջ դրուեցաւ իբրեւ Ընդհանուր ժողովի փա-
տարուղը, իւր 156 եւ 164 օրակարգներուն ներքեւ,
ինչպէս նաեւ՝ իբրեւ Ապահովական Խորհուրդի
փառաբանողը:

Կ'ուզեի ձեռք ուշադրությունը հրավերել վերոնշյալ հարցերի վրա, որոնք ինձ համար անհրաժեշտ են, որովհետև ինքս եմ համարում, որ միայն այդպիսի միջոցառումներով կարելի է փոխել հասարակական կյանքի մեջ առկա անփութությունները, որոնք հիմնականում պայմանավորված են անհատի անհամապատասխանությամբ իր սեփական հասարակության հետ, որի արդյունքում ինքնապատկերման և իր անհատականության զարգացման համար անհրաժեշտ բոլոր պայմանները չեն ստեղծվում։

Թուրքիոյ մնացուն ներկայացուցիչին նամակի
մէջ փորձ կատարուած է պաշտօնական ներանր կա-
պել 1973էն 1981 կատարուած կարգ մը յուսահա-
տական քաջանձին գործողութիւններու հետ եւ նյա-
տակալորած է միջազգային հանրութեան ուշադ-
րութիւնը շեղել 1915-1923 Օսմանեան կայսրութեան
մէջ գործադրուած Հայկական Ցեղասպանութիւնը
որանցալու թրքական կառավարութեան ընթացքէն
Հայաստանի եւ վերոնշեալ գործողութիւններուն
միջեւ որոնք կապ արտառոց է, որովհետեւ այդ ժա-
մանակաշրջանին Հայաստան մաս կը կազմէր
Խորհրդային Միութեան եւ կարողութիւնը չունէր
նման գործողութիւններ ղեկավարելու, ուղղելու
կամ հրահան ացեցութիւն բանեցնելու:

Քանի որ հաւանական է, որ Թուրքիոյ մնացած
ներկայացուցիչը ծանօթ ըլլալ պատմական այս իրո-
ւորութիւններուն, հետեւեալքար յստակ է, որ եղած
մտածմած մենեգափոխում է պատմական եւ քաղա-
քական իրողութեանց: Հետեւելով Թուրքիոյ մնա-
ցած ներկայացուցիչի տրամաբանութեան՝ կրնա-
մէկը եզրակացնել, թէ պաշտօնական Անգլաքան-
կանցնած էր Պապի մահափորձին ետին, որ տեղի
ունեցած 1981ին Ալի Աքչայի կողմէ, բրքական ազ-
գայնամոլ ահաբեկչական կազմակերպութեան
«Գրոք Գալլեր»ու անդամ, որուն քաղաքական թե-
ւը մասնակից է ներկայ համախոհական կառավա-
րութեան:


համար թրքական կողմից նման անշարժար քայլերուն շարժառիթները շատ պարզ են: Շատ աս ծանօթ է, անցնել տարուան ընթացքին այն ռուսները, որ կատարուեցաւ 1915-1923 Օսմանեան կայսրութեան մէջ գործադրուած Հայկական Ցեղասպանութեան մէջգզգային հանցաման գտով: Քանի որ աւանկալի է հերքել Ցեղասպանութեան պատմական անճշմտելի իրողութիւնը, որ ծրագրուած ձեւով 1.5 միլիոն հայերու բնաջնջման յանգեցաւ, թրքական կառավարութիւնը Հայաստանն ու սփիւռքահայութիւնը վարկաբեկելու արշաւ մը շղթայագերեման է: Անգարայի այս քայլերը ոչ այլ ինչ են, եթէ ոչ վերակենդանացումը մէջնդարեան այն գործելաձեւին, ուր բրտութեան մը պատասխանատուն կը նկատուէր ճոյնինքը բրտութեան գոհը, այն յոյսով որ ստուին անգարայ կրկնութիւնը գայն կը դարձնէր նշմարտութիւն:

Զարմանալի է, որ թրքական իշխանություններում և թիրախ ընտրուած է հայկական հնագոյն կուսակցություններէ մէկը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, որ մէկ դարէ աւելի պատմութիւն ունի եւ եղած է 1915-1923 Օսմանեան կայսրութեան մէջ գործադրուած Հայկական Ցեղասպանութեան հանաժամ համար տարուած աշխատանքին աշխուժ եւ յարատեւ հետապնդողը։ Դաշնակցութեան հանդէպ թրքական իշխանութիւններու տաեւութիւնը կ'երբայ մինչեւ 20րդ դարու սկիզբը, երբ կուսակցութիւնը աշխուժօրէն պայքարեցաւ օսմանեան քաղաքականութեան, պետական ահաբեկչութեան հայ ժողովուրդին ու Օսմանեան կայսրութեան մէջ պարոյդ այլ ազգերու դէմ կիրառուած ցեղասպանական հալածանքներուն դէմ։

1991ին անկախութեան տիրանալէն ետք Հայաստանի Հանրապետութիւնը մաս կազմեց ահաբեկչու

ԱՐԲԵԼԵԱՆ

Շաբաթ էջ 8



ԱՌՈՂՋԱՊԱՇԱԿԱՆ

ՀԵՏԱԶՕՏՈՂՆԵՐ ՇՆԶԱՐԳԵԼՈՒԹԵԱՆ ԿԱՐԵԽՈՐ ԾԻՆ ՄԸ ԿԸ ԳՏՆԵՆ

Միայն մէկ ծին կրնայ պատասխանատու ըլլալ շնչարգելութեան բոլոր պարագաներու շուրջ 40 առ հարիւրին եւ կրնայ թիրախ մը ըլլալ ո՛չ միայն նոր դեղերու, այլ նաեւ՝ արտաճանաչման քննութիւններու, կ'ըսեն գիտնականները։

Բրիտանական Սաութհէմփթըն համալսարանին, դեղաշինութեան «Շելլիմիկ - Փլաու» եւ «Ճիւլմ» Թեքնոլոգիքական ընկերութիւններու գիտնականները կ'ըսեն, թէ պարմացած եւ քաջարեւութեամբ հնազանդութեամբ, որ սխալ դուրս կը բերէ աւանդական այն տեսակէտը, թէ շնչարգելութեան նման հիւանդութիւններ ունին շատ բարձր պատճառներ։

Հետազոտութիւնը գլխաւորած տաքթ. Սթեֆըն Շոկլէյթի համաձայն, անցնող 25 տարիներուն շնչարգելութեան շուրջ հետազոտութիւններու ծիրին մէջ ասիկա «մեծագոյն յայտնաբերումն է»։

Շոկլէյթ եւ ընկերութիւնները կը մերժեն յայտնել, թէ ո՛ր ծինին մասին կը խօսին, թէ անիկա ո՛ւր կը գտնուի կամ ի՞նչ կ'ընէ, թէեւ Շոկլէյթ կ'ըսէ, թէ անիկա թոքերու աշխատանքին կապուած է։

Շոկլէյթի խմբակը Անգլիոյ մէջ ուսումնասիրած է 342 քնտանիք, ուր առնուազն 2 երեխայ շնչարգելութեան հարց կը դիմագրաւէ։ Ապա ընկերութիւնները յայտնաբերութեան ստուգած են ամերիկեան 110 ընտանիքներու մօտ, ուր շնչարգելութեան պարագաներ կան եւ նմանօրինակ արդիւնքներ գտած են։

Շնչարգելութիւնը, որ շնչառութիւնը կը դժուարացնէ (որովհետեւ օդի ճամբաները կը նեղանան), միայն Մ. Նահանգներու մէջ առնուազն 15 միլիոն մարդ կը հարուածէ։

ՇՆՉԱՐԳԵԼՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ ԿԱՐԵԽՈՐ ԵՆՈՒՄԶԵՑՆԵԼ

Հետազոտողներու համաձայն, Մ. Նահանգներու մէջ անչափահասներու մօտ շնչարգելութեան պարագաները կարելի է շուրջ 40 առ հարիւրով կրճատել, եթէ հարցը աւելի ծանրակշիռ դարձնող տուեալներ, ինչպէս՝ ընտանի անասուններ եւ ծխախոտ հեռացուին տունէնէն։

Այս գնահատումը կատարած է Սինսինատթի Անչափահասներու Բժշկական Կեդրոնը՝ հիմնուելով 1988 - 1994 նուազ քան 6 տարեկան 8257 երեխաներու մասին հաւաքուած տեղեկութիւններու վրայ։

Երեխաներէն շատեր կ'ապրէին տուններու մէջ, ուր անասուններ, ծխախոտի ծուխ եւ գերգազանութիւն պատճառող եւ ապականող այլ նիւթեր կը գտնուէին։

Հետազոտողները գտած են, թէ երեխաներուն 5,9 առ հարիւրը շնչարգելութենէ կը տառապի, ինչ որ կը համապատասխանէ 1,36 միլիոն երեխայի։

Ուսումնասիրութիւնը գլխաւորած Պրոֆ. Լէնփֆօրթի գնահատումով, կան անչափահասներու շնչարգելութեան աւելի քան 350 հազար յաւելեալ պարագաներ, որոնք կը վերադուրսին ընտանի անասուններու հանդէպ դերգաշնչութեան եւ 177 հազար յաւելեալ պարագաներ, որոնց պատճառը ծխախոտի ծուխն է։

«Սրանաբար առնուած՝ այս եւ նման տեղեկութիւններ ցոյց կու տան, թէ երեխաներու առողջութիւնը սերտօրէն կապուած է տան, որ կրնայ հանրային առողջապահական հարց դառնալ», կ'ըսէ Լէնփֆօրթ։

ՇՆՉԱՐԳԵԼՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՒՆՈՎ ՄԱՇԵՐՈՒՆ ԼԵՆԻՆԱՐԳԵԼԵԼ

Ասիոյ տարածքին կատարուած ուսումնասիրութեան մը ցոյց տուած է, որ շնչարգելութեան պատճառով մահերուն գրեթէ բոլորը կարելի է կանխարգիլել, եթէ անկէ տառապողներն ու անոնց բժիշկները աւելի լաւ հասկնան հիւանդութիւնը։

«Թերապիան համարուած շնչարգելութեան կապուած մահերուն մէջ գլխաւոր յանցանքն է», ըսած է մասնագէտ Քիւթթօր Լայ. Ապրիլի վերջերուն, երբ չըջանային ուսումնասիրութեան արդիւնքները հրա-

ԱՊԱՐԱԿՆԵՐՈՒ ՄԵՋ ԱՊՐՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԸ ԳԵՐԶԳԱՅՆՈՒԹԵՆԷ ՆՈՒՄԶ ԿԸ ՏԱՌԱՊԻՆ, ՔԱՆՔԱՂՔԻ ԵՐԵՒԱՆԵՐԸ

Երեխաներ, որոնք քաղաքներու մէջ կը բնակին, աւելի սեւ հաւանականութիւն ունին գերգազանութեւն տառապելու, քան՝ ագարակներու մէջ ապրող երեխաներ, որոնք բնակութեամբ մարմնին շատ աւելի ուժեղ բնական պաշտպանութեամբ, կ'ըսէ գերմանական տեղեկագիրը։

Ըստ մասնագէտ Էրիքա Ֆոն Մորթիուսի, ագարակի մը մէջ սեծող երեխանք պաշտպանութիւն անը կը բերեն շնչարգելութեան եւ բնօրէն պաշտպանութեան հանդէպ գերգազանութեան դէմ։ Անոնց մօտ մշտաւ հարցերուն վտանգը աւելի քան 50 առ հարիւրով կը նուազի։

Ան ուսումնասիրած է Պաւլի (Ջոյքերիա) եւ Սալգապուրի մէջ (Աւստրիա) ապրող 800 երեխաներու առողջութիւնը։

Ֆոն Մորթիուս կ'ըսէ, որ պաշտպանութեան պատճառը այն է, թէ ագարակներու մէջ ապրող երեխաները բոյներու ծուխին «ենթակալ կ'ըլլան» շատ աւելի փոքր տարիքէ սկսեալ, ինչ որ անոնց բնական պաշտպանութեան կառուցման կը նպաստէ։

ԳԵՐԶԳԱՅՆՈՒԹԻՒՆ ԶՊԱՏՃԱՌՈՂ ԿԱՏՈՒՆԵՐՈՒ ՍՏԵՂԾՈՒՄ

Ծագումով չին մասնագէտ Քսիանկոնկ (Մենրի) Եանկ. որ Մ. Նահանգներու մէջ առաջին ստեղծողն է «ըլոն» ստեղծած է, կ'աշխատի ճորագործի մը վրայ կատու մը, որ անասունները սիրող, բայց գերգազանութեան տառապողները գոհ պիտի ձգէ։

Քոնցերթը համալսարանին (Եոքոն) փոքնակտոր անցնալ շարքէ յայտնեց, թէ մասնագերգայնութիւն պատճառող միջոցներ գերմանացի մը կրնայ վաճառքի համար տրամադրելի ըլլալ 2003ին։

Ան շնչուց սակայն, որ ասիկա «ըլոն» ընտանի անասուններու ճոր աշխարհի մը սկզբնաւորութիւնը չէ, այլ անկախ մաս կը կազմէ «դարմանող ըլոն»ներ օգտագործելու վերաբերեալ իր հետազոտութեան, մարդկային հիւանդութիւններու՝ փարքիսթի հիւանդութեան շարքախտ, բուժումներ գտնելու համար։

Եանկ. որ կ'ըսէ, թէ կ'ընդդիմանայ մարդկային «ըլոն»ներու ստեղծումին, կ'աշխատի «Թրանսփօրմէթ Փէյ» ընկերութեան հետ, որ կը ծրագրէ մշտաւ կատուները 750 տոլարէն 1000 տոլարի ծախել։ Ընկերութեան հիմնադիր տաքթ. Տէյվիտ Աւըր տակաւին կը փորձէ 2 միլիոն տոլարի դրամագումար մը հաւաքել՝ Եանկի հետազոտութիւնը ֆինանսաւորելու համար։

Աւըր կ'ըսէ, թէ կատուին մորթին մէջ գեղձ մը գերգազանութիւն պատճառող փոքրէն մը կ'արտադրէ, եւ այդ միջոցը կարգ մը անոնց մօտ գերգազանութեան հակադարձութիւն կը պատճառէ։

Եանկ կ'աշխատի մշտաւ փոքրէն արտադրող ծիւցի գործունէութիւնը դադարեցնել՝ կատուի բքիցներ առնելով եւ զանոնք փոխարինելով ծիւցերով, որոնք մարդոց մօտ հարցեր չեն ստեղծեր։

Միեւային փոփոխութեան ենթարկուած բքիցները աւելի ուշ պիտի սիւսցուն հաւկիթ - բքիցներու, որոնց ծիւցային միջոցը հաճուած է եւ հաւկիթները պիտի գետնորին կատուներու արգանքին մէջ, որպէսզի աճին։

Երբ գերգազանութիւն պատճառող միջոցներ գերմէ կը արու կատուներ այս ձեւով պատրաստուին, մասնաւոր կատուներ կրնան արտադրուիլ աւանդական սիւսցնէրով։

Եանկ կը իրենք, թէ մասնա կատուներու արտադրութիւնը պիտի լանգի արտադրութեան շուկաներու, որոնք մոնակներ չեն ծանր, կամ՝ թութակներ, որոնք շատ բարձր չեն խօսիր։

պարական է Հոնկ Բոնկի մէջ։

Առողջապահութեան Համաշխարհային Կազմակերպութեան գնահատումով, աշխարհի տարածքին առնուազն 150 միլիոն մարդ շնչարգելութենէ կը տառապի, եւ տարեկան աւելի քան 180 հազար հոգի կը մահանայ անոր պատճառով։

Ասիական ուսումնասիրութիւնը տեղի ունեցած է Ջինաստանի, Հոնկ Բոնկի, Մալեզիոյ, Ֆիլիպիններու, Սինկապուրի, Բորնէյի, Թայլանդի եւ Վիեթնամի 13 քաղաքներու մէջ, եւ անոր մասնակցած են շնչարգելութենէն տառապող աւելի քան 3200 հոգի եւ անոնց ծնողները։

Ուսումնասիրութիւնը ցոյց տուած է, որ շնչարգելութենէ տառապողներէն շատերը չեն գիտակցիր իրենց վիճակին ծանրակշիռ բնոյթին կամ չեն գիտեր, թէ հիւանդութիւնը կարելի է հակակշիռի տակ առնել։

Միւս կողմէ, Լայի համաձայն, կենսոլորտին վատթարացումը շնչարգելութենէ տառապողներուն չարաչարքը աւելի ծանր դարձուցած է։

Ա. Հ. Կազմակերպութիւնը կ'ըսէ, թէ շնչարգելութենէ տառապողներուն թիւը անցնող երկու տասնամեակներուն աստիճանաբար աճ արձանագրած է։

ՅՐԱՆՍԱԿԱՆ ՈՍՏՐԷՆԵՐԸ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ԶՆՇՈՒՄՆԵՐԸ ԿԸ ԶԳԱՆ

Ոստրէները մարդոց նման կրնան բնկնուիլ եւ ճնշումի տակ նոյն հորմոնները արտադրել, կ'ըսէ ծովային էակներու ֆրանսացի կենսաբան Առնո Լաքոսթ։

Ընկնուածութիւնը տեղի կրնայ ունենալ, երբ ոստրէները բուժանողները համեմատական գոյնը այդ անասունները ջուրին յատկէն վերցնեն մետաղեայ սաւառներով եւ գանոնք փոխարինեն նաւերով, ուր մէկ կողմէն միւսը կ'օրօրուին անոնք։

Ոստրէները մարդոց նման ունին բնկնուածութեան դէմ պաշտպանութեան միջոց մը, ոստրէներու ներկայութեան արդիւնքն է։

Ասիական կարեւոր հարց մըն է երկրի մը մէջ, ուր ոստրէներու ներկայութեան արդիւնքն է։

Ոստրէները յատուկ հորմոններ կ'արտադրուին։ Նոյն այդ հորմոնները կ'արտադրուին մարդոց կողմէ, երբ անոնք ճնշումներու տակ են, կ'ըսէ կենսաբանը։

Լաքոսթ սկսած է ոստրէներու կենսաբան վրայ ընկնուածութեան ազդեցութիւնները ուսումնասիրել, երբ Ֆրանսայի արեւմտեան ծովափին երկայնքով գանոնք բուժանողները ահազանգ հնչեցուցած են անցնող 5 տարիներու ոստրէներու մահուան անբնական անհիմա պատճառով։

Ասիական կարեւոր հարց մըն է երկրի մը մէջ, ուր ոստրէներու ներկայութեան արդիւնքն է։

Մարմնին բնական պաշտպանութեան մաս կազմող բժիշկ տեսակ մը, որ կարգ մը ուտելիքներու նման կը վարուի, սննդանութեան հանդէպ գերգազանութեան բազմաթիւ պարագաներու պատասխանատու է, կ'ըսեն հետազոտողները։

Այս յայտնաբերումը կրնայ աւելի լաւ դարմանումներու յանդէպ միլիոնաւոր մարդոց համար, որոնք կարգ մը ուտելիքներու հանդէպ վատ հակազդեցութիւններ կը ցուցաբերեն։

Հետազոտողները մուկեր օգտագործած են իրենց փորձարկումներուն մէջ եւ գտած են, որ արեան ճերմակ գնդիկներու «էնդոթելի» տեսակի պէտք է մետաղէի ճանաչողական այս պարագային։

Բժիշկներ շատոնց գիտեն արդէն, որ այս տեսակի բժիշկները մեծ թիւերով կը յայտնուին մարսողական գործարաններու գերգազանութեան հետեւանքով յառաջացած բորբոքումներու վայրերուն մէջ։

Սակայն ուսումնասիրութիւնը, որ տեղի ունեցած է Սինսինատթի Անչափահասներու Բժշկական Կեդրոնի մասնագէտներուն մասնակցութեամբ, առաջինն է, որ ցոյց կու տայ, թէ այդ բժիշկները իրենք հիւանդութիւնը կը պատճառեն եւ ոչ թէ անմեղ «ակառնատներ» են։

Մարդոց մեծամասնութեան պարագային, բնական պաշտպանութեան դրութիւնը կ'անտեսէ կերուած ուտելիքները։

Սակայն, եթէ ժահրերու, մանրէներու եւ նման էակներու դէմ մարմնին բնական պաշտպանութեան միջոցները դադարին այդ ուտելիքները անտեսելէ, պաշտպանութեան մասնագէտը բժիշկները կրնան փութալ զէպի մարսողական դրութիւն եւ յարձակողականին անցնել՝ գերգազանութիւններու դուրս բանալով։

Տաքթ. Մարք Ռոթընպըրկ, որ ուսումնասիրութիւնը գլխաւորած է, կ'ըսէ, որ յայտնաբերումը կը նշանակէ, թէ դեղեր, որոնք այդ բժիշկներուն հակազդեն, կրնան օգտակար ըլլալ։

ուտելիքներու հանդէպ կարգ մը գերգազանութեան հիւանդութիւններու դարմանելու համար։

Ան յօդ կը յայտնէ, որ նման դեղեր չուկայի վրայ կրնան ըլլալ «յառաջիկայ քանի մը տարիներուն»։

Ներկայիս գոյութիւն ունեցող լաւագոյն դարմանումը գերգազանութեան պատճառող նիւթերէ խուսափումն է, այսինքն մարդիկ հեռու պէտք է մնան այն ուտելիքներէն, որոնք գրեթէ կը խանգարեն։

Ռոթընպըրկ կը յայտնէ, թէ հետազոտութիւնը կապուած չէ ուտելիքներու հանդէպ ծայրայեղ գերգազանութիւններու ծանօթ իրեւ «աւաֆիւլաքսիւ», որ շնչառական դժուարութիւն եւ երբեմն մինչեւ իսկ մահ կը պատճառէ, այլ անիկա կը վերաբերի ուտելիքներու հանդէպ գերգազանութեան «քրոնիք» տեսակներուն։

ԳԵՏՆԱՊԻՍԱԿԻ ՀԱՆԳԵՊ ԳԵՐԶԳԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԵՒ ԳՐԱՅԻՆ ԵՐԵՒԱՆԵՐԸ

Յայտնաբերումով մը, որ կրնայ նպաստել գետնապիստակի հանդէպ գերգազանութեան դէմ պայքարին, հետազոտողներ փաստած են, թէ իրենց երեխաներուն կաթնուտոց մարքը կրնան երբեմն մահացու այդ գերգազանութեան վտանգը իրենց գաւակներուն փոխանցել։

Մասնաւոր թիւերի այս յայտնաբերումը կարեւոր կը նկատեն, նկատի ունենալով, որ երեխաներ, որոնք կը ծնին ընտանիքներու մէջ, ուր ծնողները մէկ կամ երբեմն քանի մը տարեկան կուրք շնչարգելութեան, «Էքզիմա»յի կամ գեր-

գոյնութեան վերաբերող այլ հիւանդութեան հարցունի, յաճախ գետնապիստակի հանդէպ գերգազանութեան վտանգ կը դիմագրաւեն։

Նկատի ունենալով, որ կարելի է ծնունդէն իսկ գիտնալ, թէ երեխաները գերգազանութեան վտանգ կը դիմագրաւեն, անոնց կաթնուտոցը կրնան խուսափել գետնապիստակի ուտելէ, կ'ըսեն մասնագէտները։

Թորոնթոյի համալսարանի կարգ մը հետազոտողներ, որոնք ձեռնարկած են նշեալ հետազոտութեան, կ'ըսեն, թէ կային կասկածներ, թէ մօր կաթը «գաղտնի» ճամբայ մըն է, որուն միջոցով երեխաները գերգազան կը դառնան գետնապիստակի հանդէպ։

Անոնց տեղեկագիրը կը յայտնէ, որ նման գերգազանութիւն մը հանրային առողջապահութեան կարեւոր հարց մըն է, որ բրիտանացի եւ ամերիկացի երեխաներու 1 առ հարիւրին կը վերաբերին։

Անիկա կանխահասօրէն կը սկսի, յաճախ կը կապուի ծանրակշիռ կամ կենսաթին վտանգ սպառնացող հակադարձութիւններու եւ հազուադէպօրէն կը բուժուի։

Մօր կաթին ճամբով գետնապիստակի խուսափելը չ'ապահովեր, որ երեխաները աւելի ուշ պիտի խուսափին անոր հանդէպ գերգազանութենէ։ Սակայն Փիթըր Վառաս, որ քանակական հետազոտութեան պատասխանատու է, կ'ըսէ թէ գերգազանութիւնը յաճախ ընթացքի մէջ կը դուրս երեխային անուրման սկզբնական շրջանին իսկ, եւ բժիշկներ ընդհանրապէս ծնողներու կը թելադրեն, որ երեխաներուն մինչեւ 3 տարեկան գետնապիստակի կապուած նիւթեր չկերցնեն։

ԿՐԿՆԵՓՆԵՐՈՒ, ՇՔԱՐՆԵՐՈՒ 25 ԱՌ ՀԱՐԻՒՐԸ ԳԵՐԶԳԱՅՆՈՒԹԻՒՆ ՊԱՏՃԱՌՈՂ ՆԻԹԵՐ ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԵՆ

Ամերիկեան երկու մահացուներու մէջ քննուած կրկնփնդներու (պիսթոլներու), շաքարներու եւ պաղպաղակներու մէջ չորրորդ փոքր հասնատութեամբ գետնապիստակ կը պարունակէ, հակառակ անոր որ զանոնք պարունակող տուփերուն կամ տոպրակներուն վրայ ոչինչ նշուած է, կ'ըսէ ամերիկեան Ուոտսոն Էնի եւ Դեյքեր Պատասխանատու Մարմինը (ԷՖ. Տի. Էյ.), որ քննութիւն կատարած է Ուիսքոնսին եւ Միչիգանի մէջ։

ԷՖ. Տի. Էյ. այս քայլին դիմած է գերգազանութիւն պատճառող միջոցներու կապուած հարցերու պատճառով։

Երկու տարի տեւած ուսումնասիրութեան քննարկումը քննուած 73 տուեղներուն 25 առ հարիւրին մէջ գետնապիստակի մնացորդներ գտնուած են. իսկ 45 այլ տուեղներուն 10 առ հարիւրին մէջ հակափոքր փոքրէն գտնուած է։

Այս երկու միջոցը կրնան գերգազանութեան կապուած հակադարձութիւններու դուրս բանալ կարգ մը մարդոց մօտ, որոնք կրնան մոնիթինգ մահացու։

Մասնագէտներու համաձայն, այս միջոցով վարակումը տեղի կ'ունենայ, որովհետեւ այն սարքեր, որ կ'ենթոյն ուտելիքները, անհրաժեշտ ձեւով չեն լուացուիր։

Տարեկան 150 ամերիկացիներ կը մահանան ուտելիքներու հանդէպ գերգազանութիւններու պատճառով. ընդհանրապէս՝ անգիտակցաբար ուտելիքները սննդանիւթեր, որոնք գետնապիստակ կամ այլ տեսակի պիստակներ կը պարունակեն։

ԿՈՒԶՈՒԻ

● Քժիշկի օգնական փ
ձառու քարտուղարուհի
Էն. 01-262795 եւ
307129:


**ԱՆՁՆԱԿԱՆ
ԴԱՍԵՐ**

● Միջնակարգի ա
կերտներու համար. հե
04-541298:

ՄԱՐԶԱԿԱՆ



ԱՇԽԱՐՀ



ԹԵՆԻՍ. ՈՒՒՍՊՈՐՏԸ

ՍԱՄՓՐԱՍԻ ԵՐԱԶԸ ԶՈՒՐԸ ԻՆԿԱԻ. ԱՆ ԴՈՒՐՍ ՄՆԱՅ ՄՐՑԱՇԱՐՔԷՆ

Ուիմպլդոնի թենիսի մրցաշարքի 4րդ հանգրուանին, ամերիկացի Փիթ Սամփրաս դուրս մնաց, պարտուելով պատանի գուիցերիացի Ռոմե Ֆետերերին՝ 7-6, 5-7, 6-4, 6-7 եւ 7-5 արդիւնքով: 17 տարեկան գուիցերիացին ունեցաւ լաւ խաղարկութիւն: Այսպիսով, Սամփրասի երապի ջուրը ինկաւ, ան կր փորձեր բոլոր ժամանակներու մրցանիշ հաստատել, 13րդ կրան շէմ տիտղոսը շահելով:

Վերջին 4 տարիներուն տոյն մրցաշարքին տիտղոսը շահած Սամփրասի այս պարտութիւնը եղաւ աւելի յուսարձակի տակ, քան գուիցերիացիին իրագործումը, որուն մասին այդքան մեղան չի հոսիր, որքան Սամփրասի երապին անկատար մնալուն մասին...

Սամփրասի պարտութեամբ, ճամբան պայն կը քցուի երկու ալ հսկաներու դիմաց՝ ամերիկացի Անտոնի Ակասիի եւ աւստրալիացի Փաթրիք Ռաֆորթի, սակայն կան նաեւ ալ աուստրալիացիներ, ինչպէս՝ Նիքոլա Լաքիտէ (Ֆրանսա), Մարաթ Սաֆին (Ռուսիա), Կորան Իվանիսեւիչ (Սերուսիա), ինչպէս նաեւ Սամփրասի կոշմարը՝ Նոյնիքն Ֆետերեր:

Աղջկանց մրցումներուն, ամէնէն տաք եւ ապաստած հանդիպումը՝ ամերիկացի Լինտոնէ Տեվլընփորթի եւ եուկոսլաւ Ելենա Տոքիչի միջեւ աւարտեցաւ ամերիկացիին յաղթանակով՝ 7-5 եւ 6-4:

Ամերիկացի ձենիֆոր Քափրիաթի, որ շահեցաւ Ռոյան Կարոսի տիտղոսը, դիւրին յաղթանակ մը տարաւ Ֆրանսացի Սանտրին Թեաթիւի դէմ՝ 6-1 եւ 6-2 արդիւնքով:

Սեւամորթ ամերիկացի քոյրերը՝ Վինըս եւ Սերենա Ուիլիամս յաղթանակներ արձանագրեցին: Վինըս պարտութեան մատնեց ռուս Նատեմուս Փեթրովան (6-2 եւ 6-0), իսկ Սերենա՝ պուլկարացի Մակտայենա Մալիեան (6-2 եւ 6-1):

Պէճիքացի աղջիկները եւս ունեցան լաւ ելոյթներ: Ժիւսթին Լէնէն 4-6, 6-2 եւ 6-2 արդիւնքով պարտութեան մատնեց Անքը Հուպըրը, իսկ Բիմ Քլայսթրը 7-6 եւ 7-6 արդիւնքով յաղթեց ամերիկացի Մեկան Շոկնէսի:

Ստորեւ՝ 4րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

ԱՂՋԻԿՆԵՐ

Ժիւսթին Լէնէն (Պէճիքա) - Անքը Հուպըր (Գերմանիա) 4 - 6, 6 - 2, 6 - 2

Վինըս Ուիլիամս (Մ. Ն.) - Նատեմուս Փեթրովա (Ռուսիա) 6 - 2, 6 - 0

Քոնչիթա Մարթինէս (Սպանիա) - Լինա Կրասնորուցքայա (Ռուսիա) 6 - 3, 6 - 4

Նաթալի Թոպիա (Ֆրանսա) - Թամարին Թանասուկարն (Թայլէնդ) 6 - 3, 6 - 2

Լինտոնէ Տեվլընփորթ (Մ. Ն.) - Ելենա Տոքիչ (Եուկոսլաւիա) 7 - 5, 6 - 4

ձենիֆոր Քափրիաթի (Մ. Ն.) - Սանտրին Թեաթիւ (Ֆրանսա) 6 - 1, 6 - 2

Բիմ Քլայսթրը (Պէճիքա) - Մեկան Շոկնէսի (Մ. Ն.) 7 - 6, 7 - 6

Սերենա Ուիլիամս (Մ. Ն.) - Մակտայենա Մալիեա (Պուլկարիա) 6 - 2, 6 - 1

ՏՂԱՔ

Նիքոլա Լաքիտէ (Ֆրանսա) - Լէյթրն Հուիթ (Աւստրալիա) 4 - 6, 6 - 4, 6 - 3, 4 - 6, 6 - 4

Անտոնի Ակասի (Մ. Ն.) - Նիքոլա Քիթրը (Գերմանիա) 6 - 3, 7 - 5, 7 - 5

Ռոմե Ֆետերեր (Զուիցերիա) - Փիթ Սամփրաս (Մ. Ն.) 7 - 6, 5 - 7, 6 - 4, 6 - 7, 7 - 5

Կորան Իվանիսեւիչ (Սերուսիա) - Կրէկ Ռուկեմսթի (Բրիտանիա) 7 - 6, 6 - 4, 6 - 4

Մարաթ Սաֆին (Ռուսիա) - Աննո Քլեման (Ֆրանսա) 6 - 0, 6 - 3, 6 - 2

Փաթրիք Ռաֆորթ (Աւստրալիա) - Միխայիլ Եուզնի (Ռուսիա) 2 - 6, 6 - 3, 6 - 2, 7 - 5

Թոմաս Լէնքվիսթ (Շուէտ) - Կիլերմո Քանաս (Արժանթին) 6 - 3, 6 - 3, 6 - 1

ԼՈՂ

ՍԼՈՒՏՆՈՎ ԿԸ ԳԼԽԱՒՈՐԵ ՌՈՒՍԻՈՅ ԽՈՒՄԲԸ՝ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ

21 տարեկան Ռոման Սլուտնով, որ վերջերս 50 եւ 100 մէթր լողի աշխարհի նոր մրցանիշ հաստատեց, այս ամիս ձափոնի մէջ կայանալիք աշխարհի ախոյեանութեան մրցումներուն պիտի գլխաւորէ ռուսական կազմը, կը հաղորդէ լողի Ռուսիոյ ֆետերապիոնը:

Սլուտնովի մարզիչը, որ անոր մայրն է, Կ'ըսէ, թէ ռուսական կազմէն լաւ եւ փայլուն արդիւնքներ կ'աւելակէ աշխարհի ախոյեանութեան մրցումներուն, որովհետեւ նախ անոր համար որ խումբը լաւ պատրաստուած է, ապա նաեւ որովհետեւ կազմին մէջ կան երկսեռ լաւ տարրեր, ինչպէս Ալեքսանտր Փոփով Փանքրաթով, Սլուտնով եւ ուրիշներ:


ԻՏԱԼԱՅԻ ԼԻԱԹԻ ՇԱՐԵՑԱԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՌԵԼԻՆ

Լիբանանի 25րդ Մարլպորո ռելին, անցեալ շաբաթավերջին վերջ գտաւ իտալացի Փիեթրո Լիաթի եւ անոր օգնականին՝ Քարլո Քասիալի յաղթանակով, որոնք յաջողեցան իրենց ինքնաշարժին՝ Սուպարու Իմփրեկալի հետ գրաւել առաջին դիրքը, արձանագրելով 2 ժամ 56 վայրկեան եւ 13 երկվայրկեան արդիւնք մը:

Երկրորդ պատուաբար դիրքը գրաւեցին լիբանանցիներ Ժան - Փիեթ Նասրալլա եւ անոր օգնականը՝ Եուսէֆ Պասիլ, արձանագրելով 3 ժամ 01' 51" արդիւնք մը:

Այլ լիբանանցի մը՝ Ռոմե Ֆրդալի չկրցաւ ռելին աւարտել, որովհետեւ 8րդ հանգրուանին անոր ինքնաշարժը խանգարում ունեցաւ:

Մարլպորո ռելին չկրցաւ շարունակել նաեւ Միջին Արեւելքի



Նասրալլա եւ իր օգնականը՝ Պասիլ:

շապ (Մեուտական Արաբիա) եւ Պուպ Ուիլիս (Ալիք) Թոյորթ Բորոյա 3 ժամ 05' 32" 4.- Տոմեթ Պու Տու-

5.- Իվ Լուպէ եւ Ժան - Ժաք Ռիւնշէ (Ֆրանսա) Միթսուպիշի Լանսըր 3 ժամ 10' 12"

6.- Միշէլ Սալէի եւ Անմէտ Ղրպէյրի (Լիբանան) Թոյորթա Սելիքա 3 ժամ 20' 15"

7.- Ապտալլա Քասըմի (Ա. Մ. Էմիրութիւններ) եւ Ֆրէտ Կոսնթոս (Լիթվանիա) Միթսուպիշի Լանսըր 3 ժամ 21' 47"

8.- Ռոն Բեմրն (Աւստրալիա) եւ Ուէյն Պոշէր (Լիթվանիա) Միթսուպիշի Լանսըր 3 ժամ 27' 14"

9.- Մոհամէտ Սարաֆ եւ Ուալիտ Սարաֆ (Քուէյթ) Միթսուպիշի Լանսըր 3 ժամ 28' 36"

10.- Քիրիաքոս Բիրաքո եւ Քոսթաս Լաոս (Կիպրոս) Սուպարու Իմփրեկա 3 ժամ 38' 23"



Սուհէյլ Խուրի բաժակը կը յաճճէ Լիաթի:

ռելիներու ախոյեան Մոհամէտ Պրն Սըլայէմ (Ա. Մ. Էմիրութիւններ), որուն ինքնաշարժը՝ Յորտ Յոքս Տապրլիու Ար. Սի. կրակ առաւ եւ ան իր օգնականին՝ Ռոնըն Մորկընի հետ (Ալիք) մահէ փրկուեցաւ: Մորկըն, որ 14 տարի է վեր կը գործակցէր Սըլայէմի հետ, 25րդ ռելիէն արդէն ետք մտադրած էր ասպատկեր վերջնականապէս լքել:

Նշենք, թէ Միջին Արեւելքի ռելիներու «Յորտ» ընկերութիւնը, այս արկածէն ետք որոշեց Սըլայէմի ինքնաշարժը (որ ամբողջութեամբ փճացած է) փոխադրել Անգիա, ամբողջական քննութիւններու ենթարկելու եւ անոր կրակ առնելու պատճառները գիտնալու համար:

Ստորեւ՝ առաջին տասը դիրքերը գրաւողները (17 ինքնաշարժներ միայն յաջողեցան ռելին աւարտել).

1.- Փիեթրո Լիաթի եւ Քարլո Քասիալ (Իտալիա) Սուպարու Իմփրեկա 2 ժամ 56' 13"

2.- Ժան - Փիեթ Նասրալլա եւ Եուսէֆ Պասիլ (Լիբանան) Սուպարու Իմփրեկա 3 ժամ 01' 15"

3.- Ապտալլա Պասի-

մէթ եւ Նեպիլ Նրժէյմ (Լիբանան) Միթսուպիշի Լանսըր 3 ժամ 08' 26"



Լիաթի եւ իր օգնականը՝ Քասիալ:

ԷՆՏԵՐՈՆ 4 ՏԱՐԻՈՎ ԵՐԿԱՐԱԶԳԵՑ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԹՈԹԵՆՅԱՄԻ ՅԵՏ

Անգլիոյ ազգային խումբին եւ Թոթենհամի 29 տարեկան միջնապահը՝ Տարրն Էնտրորթն, երէկ 4 տարիով երկարաձգեց պայմանագրութիւնը Լոնտոնի կազմին հետ, որուն միացած էր 1992ին՝ Փորթսմութին:

Էնտրորթն վերջերս յաճախակի հանդիպումներ կ'ունենար մարզիչ Կլէն Հասթրիի հետ, որ կ'ուզէր միջնապահին կեցութիւնը անպայման ապահովել կազմին մէջ, զայն նկատելով բանալի տարր մը:

Հատուկ, որ Մարտին ձորձ Կրահամը փոխարինած էր, կազմէն ներս արդէն բաւական մեծ փոփոխութիւններ կատարած է: Ան Թոթենհամի միացուց Մանչեսթըր Եունայթըդի յառաջագի Թեաի Շերինկհամը, Չելսիի ուրուկուէյցի միջնապահ Կուսթաւո Փոյթըր եւ Կարմիր Աստղ Պելկրատի յետապահ Կորան Պուրիշեւիչը:

Կլէն Հասթը պիտի փորձէ ամէն գնով յառաջիկայ եղանակին իր խումբին ապահովել տիտղոս մը:

2002ի ՄՈՆՏԻԱԼԻ ՁՏՈՒՄԻ ՄՐՑԱՇԱՐՔ

ՊՐԱԶԻԼ ՊԱՐՏՈՒԵՑԱԻ ՌԻՐՈՒԿՈՒԵՅԷՆ՝ 1-0

Հարաւային Ամերիկայի գօտիէն ներս տեղի ունեցող 2002ի Մոնտիալի գտումի մրցումներուն, Պրազիլ 1-0 արդիւնքով պարտութիւն մը կրէլէ ետք Ուրուկուէյէն (այս վերջինին դաշտին վրայ), աւելիով դժուարացուց ձափոնի եւ Հարաւային Քորէայի իր տոմար ապահովելու յոյսերը:

Հակառակ անոր որ այժմ Պրազիլ կը գրաւէ 4րդ դիրքը, սակայն Մոնթեվիտոյէն 1-0 արդիւնքով պարտուած հեռանալը պատճառ դարձաւ, որ Ուրուկուէյ անոր նման ունենայ 21 կէտ, սակայն իր ունեցած տկար կոլէկորէյֆին պատճառով անկրկ կը մնայ 5րդ դիրքին վրայ: 62 հապար համակիրներու ներկայութեան, Ֆետերիք Մակալանէս նշանակեց մրցումին «որք» կոյր (32րդ՝ փենալթիով):

Մրցումը կրնար աւարտիլ 1-1 արդիւնքով, եթէ օրուան իրաւարարը՝ Հիուձ Տայաս նկատի առնէր Ռիվալտոյի հարուածած գնդակը, որ զսպում էր ուրուկուէյցի բերդապահ Ֆապիան Քարինիի կողմէ... բերդին գիծէն ներս միայն:

Նշենք, թէ առաջին չորս դիրքերը գրաւող կազմերը կ'ապահովեն աւարտական մրցումին իրենց տոմար, իսկ 5րդ դիրքը գրաւող խումբը, փլէյօֆի մրցում մը կը կատարէ Ովկիանիոյ ախոյեան Աւստրալիոյ դէմ:

Ստորեւ՝ դասաւորումը (տասը խումբերն ալ կատարած են 13ական մրցում).

	ՅԱՂԹ. ՀԱՒ. ՊԱՐՏ. ԿԵՏ			
1.- Արժանթին	10	2	1	32
2.- Փարակուէյ	8	2	3	26
3.- Էքուատոր	8	1	4	25
4.- Պրազիլ	6	3	4	21
5.- Ուրուկուէյ	6	3	4	21
6.- Քոլումբիա	5	4	4	19
7.- Պոլիվիա	3	4	6	13
8.- Փերու	3	3	7	12
9.- Չիլի	3	1	9	10
10.- Վենեսուելա	1	1	11	4

ՊԵՔԸՐ ԴԱՐՁԵԱԼ Կ'ԻՅՆԱՅ ՏՈՒՐՔԵՐՈՒ ԾՈՒՂԱԿԻՆ ՄԵԶ

Թենիսի նախկին աստղերէն գերմանացի Պորիս Պեքքըրի փաստաբանը երէկ ըսաւ, որ իր պաշտպանեալը 25 միլիոն մարք (11 միլիոն տոլար) պիտի վճարէ իբրեւ յետնեալ տուրք: Ան երկար ատեն «փախած էր» տուրքերէ:

Փաստաբանը այժմ բանակցութիւններ կը վարէ պատկան մարմիններուն հետ՝ հարցին բարւոք լուծում մը գտնելու համար: Պեքքըր կը մերժէ այդքան գումար վճարել, մինչ պետութիւնը կը մնայ անդրդուելի եւ կը խօսուի մինչեւ անգամ բանտարկութեան մասին:

1998ին, քննիչ մարմին մը ի յայտ բերած էր, թէ Պեքքըր կը խուսափի տուրքերէն՝ կեղծ փաստաթուղթերու իմամբ վրայ, հաղորդելով, թէ այս մէկը վեղծարարութիւն է եւ իր կարգին ունի յատուկ պատիժ:

Պեքքըր յայտնած էր, թէ ինք վերջին 10 տարիներուն Մոնաքո կ'ապրի, հետեւաբար վերծ կը մնայ տուրքերէն, սակայն գերմանական իշխանութիւնները փաստած են, որ նախկին թենիսիստ իր ժամանակին մեծ մասը անցուցած է Գերմանիա:

ՊԱՅԷՐՆ ՄԻՒՆԻԽ ԶԷ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԱԾ ՔԷՄՊԸԼՈՎ

Կ'ԸՍԵ ՌՈՒՄԸՆԻԿԷ

Պայէրն Միւնիխի փոխ նախագահ Քարլ-Հայնց Ռումընիկէ երէկ յայտնեց, որ իր խումբը չէ հետաքրքրուած անգլիացի յառաջապահ Սոլ Բէմպըրով: Ան կ'ըսէ, «Երեք ամիս առաջ հետաքրքրուած էինք, այո՛, բայց այլեւս ո՛չ»: Հարցումի մը, թէ ինչո՞ւ փոխած են իրենց միտքը, Ռումընիկէ կ'ըսէ, թէ անգլիացիին գինը շատ բարձր է:

Խումբին նախագահը՝ Ֆրանց Պեքքնպաուրը շատ մօտէն հետաքրքրուած էր 26 տարեկան սեւամորթ անգլիացիով, զայն նկատելով աշխարհի լաւագոյն յետապահներէն մէկը:

Փաթրիք Անտերսոնին մեկնումէն ի վեր (Պարսելոնա), Պայէրն Միւնիխ կը փնտէս փոխարինող մը՝ միջնապահ կամ յետապահ դիրքին վրայ:

Ինթեր Միլան, Լիվըրփուլ եւ Արսենալ բոլորն ալ հետաքրքրուած են Բէմպըրով, որուն պայմանագրութիւնը նոր աւարտած է Թոթենհամին հետ եւ ան կ'ուզէ անպայման մեկնիլ լոնտոնեան կազմէն:

از کتاب: هکاتف: ۲۶۱۲۷۴-۲۶۱۱۵-۲۵۸۵۲۶